Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

XXI ԴԱՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի և ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամի համատեղ կազմակերպած գիտաժողով

Երևան - 2010

ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

պատ. գիտ. դոկտ. պրոֆ., Է. Մինասյան

Հայ և ռուս եկեղեցիների արդի հարաբերություններն իրենց ամբողջության մեջ սկսվել են ՀՀ անկախության տարիներին՝ երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի գահակալության օրոք և ավելի գործնական հիմքերի վրա են դրվել Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության առաջին իսկ տարիներից: 2000 թվականին Ալեքսի Բ Պատրիարքի հրավերով Գարեգին Բ–ի Մոսկվա կատարած այցից հետո 2001 թ. ռուս Ուղղափառ եկեղեցու պետն այցելեց Հայաստան պաշտոնապես մասնակցելու քրիստոնեությունը Հայաստանում, որպես պետական կրոն ընդունման 1700–ամյա հոբելյանական միջոցառումներին: 2000 թվականին ռուս եկեղեցու երջանկահիշատակ Ալեքսի Բ Պատրիարքը մասնակցել է Ս. Պետերբուրգի Սուրբ Կատարինե Հայոց Եկեղեցու վերաօծման արարողությանը, նույն տարի Վեհափառ Հայրապետը մասնակցել է Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ Եկեղեցու օծմանը և ռուս Պատրիարքի հետ օծել է նույն բակում գտնվող Հայկական խաչքարը: 2004 թվականին Ալեքսի Բ Պատրիարքը Ամենայն Հայոց Հայրապետի հետ մասնակցել է Մոսկվայի կենտրոնում վեր խոյացող Հայկական Սուրբ Խաչ եկեղեցու հիմնարկեքին:

Հայ և ռուս եկեղեցիների միջև հարաբերությունները զարգանում են նաև ԱՊՀ միջկրոնական խորհրդում ծավալվող համագործակցությամբ:

Դա կարևորվում է Ռուսաստանի և Կովկասյան երկրների հոգևոր առաջնորդների եռակողմ և քառակողմ հանդիպումների ձևաչափով, որոնք միտված են տարածաշրջանում առավել

ամրապնդելու կայունությունն ու խաղաղությունը: Արժանահիշատակ է 1994 թվականին Վազգեն Ա Ամենայն Հայոց երջանկահիշատակ կաթողիկոսի, ռուս Ուղղափառ եկեղեցու երջանկահիշատակ Ալեքսեյ Բ Պատրիարքի և Ադրբեջանի Շեյխ Ուլ Իսլամ Փաշազադեյի համատեղ հայտարարությունը՝ կրոնական գործոնը բացառելու հակամարտության մեջ: Հայ և ռուս եկեղեցիների հարաբերությունները զարգանում են նաև կրթական համագործակցությամբ, սոցիալական զանազան ծրագրերի միջոցով, միջնորդական առաքելություններով և երկու Եկեղեցիների ներկայացուցիչների համագործակցությամբ ավելի լայն միջեկեղեցական-էկումենիկ հարաբերություններում, համագործակցում ՄԻԱՎ/ՁԻԱՀի դեմ, աղանդների դեմ պայքարում:

Միայն երկու միլիոն հայեր ապրում են Ռուսաստանում: Հայ եկեղեցին այս երկրում ունի թեմեր՝ բազմաթիվ եկեղեցիներով, կրթական և մշակութային հաստատություններով: Հայ հոգևորականները համագործակցում են ռուս եկեղեցու սպասավորների հետ՝ այցելում բանտեր, իրականացնում սոցիալական և վերականգնողական ծրագրեր, կրթական և մշակութային միջոցառումներ: Փոխադարձաբար Հայաստանում էլ գործում են ռուսական եկեղեցիներ ինչպես այստեղ ապրող ռուսների, ուկրաինացիների, հույների և Հայաստանում գործող Պրավոսլավ երկրների դեսպանությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների, այնպես էլ զինվորականության համար: Վերջերս էր, որ Գյումրիում՝ ռուսական զորամասում, վերաբացվեց 1920 թվականին Թուրքերի կողմից հրկիզված զորամասի եկեղեցին:

Այս հարաբերություններում կարևոր և վճռորոշ նշանակություն ունեն երկու եկեղեցիների պետերի բարեկամությունն ու եղբայրական կապերը, նրանց փոխայցելությունները, համատեղ

իրականացրած միջոցառումները: Դրանք, լուսաբանվելով ՁԼՄներով, դառնում են ուսանելի օրինակներ՝ համագործակցության և երկխոսության, հավատացյալների մոտ առկա կարծրատիպերի վերացման բարեկամության առավել ամրապնդման համար:

Հակառակ քննադատների կարծիքին՝ երկու Եկեղեցիների միջև զարգացող և ամրապնդվող հարաբերությունները բխում են նախ և առաջ երկու ժողովուրդների և երկրների շահերից: Այն հրամայական է հայ եկեղեցու համար՝ հոգալու իր միլիոնավոր անդամների հոգևոր պետքերը, որոնք ապրում են ուղղափառ երկրներում կողք կողքի ռուսների և այս երկրներում ապրող այլ ժողովուրդների հետ: Այն հրամայական է նաև, որպեսզի համագործակցաբար առավել զորացնենք և ամրապնդենք արևելյան քրիստոնեության հոգևոր արժեքներն արդի աշխարհում: Ճիշտ է, որ հարյուրամյակներ առաջ հայ ժողովրդին և նրա հավատքին խեթ էին նայում: Սակայն սա միայն ռուսների մոտեցումը չէր, այլ՝ այդպես էին նաև հույները ու լատինները: Այո՛, հայ եկեղեցու, նրա հավատքի ու ավանդության մասին մերժելի տեսակետները, որոնք Ռուսաստանում ժամանակին տարածել է Մաքսիմ Գրեկը՝ ազգությամբ հույն, որը հսկայական ազդեցություն ուներ Ռուս աստվածաբանական մտքի վրա, անհերքելի իրողություն է: Դեռ կան հեղինակներ, որոնք բացասաբար են անդրադառնում Հայ և Ռուս Եկեղեցիների միջև առկա հարաբերություններին: Միշտ էլ առաջացող խնդրահարույց հարցերը երկու եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականների ուշադրության կենտրոնում են եղել և համարժեք լուծումներ են ստացել:

2000 թվականի փետրվարի 29-ից մարտի 3-ը Ամենայն Հայոց Հայրապետը պաշտոնական այցով գտնվում էր Մոսկվայում՝ որպես հյուր Ալեքսի Բ Պատրիարքի: Այս հանդիպման արդյունքում ձեռք բերված համաձայնություններից ոմանք կյանքի կոչելու համար 2000 թվականի հուլիսի 6-ին Մոսկվայի Դանիելյան

վանքում տեղի ունեցավ հանդիպում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Եղնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի և ռուս Ուղղափառ եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների նախագահ Կիրիլ Մետրոպոլիտի միջև (այժմ Կիրիլ Պատրիարք), որի ընթացքում կնքվեց համաձայնագիր երկու եկեղեցիների միջև աստվածաբանական քննարկումներ սկսելու (տե՛ս, Էջմիածին ամսագիր, 2000 հուլիս): Հանդիպման ընթացքում որոշվեց նաև քննարկումներ սկսել այնպիսի հարցերի շուրջ, որոնք վերաբերում են Եկեղեցու և հասարակության հարաբերություններին, բիոէթիկայի խնդիրներին և հովվական արդի հարցերի: Օրակարգում են նաև աստվածաբանական և քրիստոսաբանական հարցերը: Տեղի է ունեցել երկու հանդիպում՝ սոցիալական հարցերի և մարդու իրավունքների մասին ռուս Ուղղափառ եկեղեցու ստեղծած փաստաթղթերի շուրջ: Հաջորդ հանդիպումը, որ երջանկահիշատակ Ալեքսի Բ Պատրիարքի մահվան պատճառով հետաձգվեց, տեղի ունեցավ Մոսկվայում՝ Քրիստոսաբանության մեջ Հուլիանոս Հալիկառնացու և Սեվերիանոս Անտիոքացու վարդապետությունների շուրջ:

Մեծաթիվ ուղղափառներ, այսօր հետաքրքրությամբ են ընթերցում հայ եկեղեցու հայրերի՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու, Սուրբ Ներսես Շնորհալու գործերը: Նրանք ուսումնասիրում են Հայ Եկեղեցու հոգեղենությունը, ավանդությունը, ռուսերենի թարգմանում հայ հոգևորականների գործեր: Զմոռանանք, որ սուրբ Գրիգոր Լուսավորիչը ռուս եկեղեցու պաշտելի սրբերից է:

Այսօր հայ եկեղեցին լավ հարաբերություններ ունի նաև Կաթոլիկ եկեղեցու հետ և նրա հետ վարում է աստվածաբանական երկխոսություն, որպես անդամ Հին Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքի: Թեև մինչև 1970 թվականը լուրջ խնդիրներ կային նրանց միջև, բայց այժմ բավականին առաջընթաց է արձանագրվել թե՛ երկխոսության և թե՛ համագործակցության մեջ, սակայն Կաթոլիկ եկեղեցին Արևելյան որևէ

եկեղեցու հետ հաղորդություն չի վերականգնել: Եթե նկատի ունեք Արևելածես կաթոլիկներին, ինչպիսին օրինակ Զմառի Հայոց Պատրիարքությունն է, ապա դա ինքնուրույն Եկեղեցի չէ, ինչպես Հայ կամ Ղպտի Եկեղեցիները, այլ մասն է Կաթոլիկ Եկեղեցու և ենթակա Հռոմի Աթոռին: Դրանք եկեղեցիներ են, որոնք հիմնվել են հենց Հռոմի կողմից 16, 17 և 18-րդ դարերում ի հակադրություն Արևելյան Ուղղափառ եկեղեցիների: Իսկ Երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի և Երջանկահիշատակ Հովհաննես Պողոս Բ Պապի միջև կնքված 1996 թվականի համաձայնագիրը չի պարունակում այնպիսի մի դրույթ, որ նշի թե երկու եկեղեցիների միջև վերականգնվել է հաղորդությունը: Եկեղեցական հաղորդությունը այլ բան է:

2009 թվականի հուլիսի 15-ին Մոսկվայում՝ Դանիելյան մայր վանքում տեղի ունեցավ Հայ Առաքելական Եկեղեցու պետ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետ՝ Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքի միջև անդրանիկ եղբայրական հանդիպումը:

Այս հանդիպման մանրամասների մասին մեր երկու եկեղեցիների հավատացյալները տեղեկացել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մոսկվայի Պատրիարքության տարածած պաշտոնական հաղորդագրություններից: Ցավոք, հրապարակման սկզբնամասում պաշտոնական մակարդակում դրանց բարվոք վիճակի մասին արած համառոտ ակնարկից բացի, հեղինակը որևէ կերպ չի անդրադարձել այս կարևոր իրադարձությանը և ներկայացրել հայ և ռուս Եկեղեցիների արդի հարաբերությունները, որոնք զարգանում են վերջին տասնամյակներում: Անդրադարձը կարող էր լավ հենք լինել նյութն առավել օբյեկտիվ և ամբողջական ներկայացնելու համար: Հուլիսի 15-ի հանդիպման ընթացքում Ռուս Պատրիարքը նշում է. Ես բոլոր իրավունքներն ունեմ ասելու, որ սա հին ընկերների հանդիպում է, որովհետև Մոսկվայի Պատրիարքությունն ու Սուրբ Էջմիածինը կապված են երկարամյա

եղբայրական կապերով: Մեր անձնական կապերը Ձեզ հետ մշտապես բնորոշվել են եղբայրական ջերմությամբ, մտերմությամբ և բարեկամական անկեղծ զգացումներով, այդպիսի կապերը՝ լի եղբայրական սիրով, միշտ էլ գոյություն են ունեցել մեր Եկեղեցիների միջև: Բնականաբար, մենք խոսում ենք տարբեր ազգային լեզուներով, մեր եկեղեցիների միջև առկա են աստվածաբանական տարբերություններ, այնուամենայնիվ, մենք եղբայրներ ենք, և սա պատահական չէ, քանի որ հենց եղբայրաբար էլ զարգացել են հարաբերությունները Հայաստանի և Ռուսաստանի միջև: Մեր համընդհանուր պատմությունն ավելի է ամրացրել մեր երկու ժողովուրդների եղբայրական կապերը, իսկ եկեղեցիները մշտապես աջակցել են այդ կապերին: Մեր երկու եկեղեցիները հանդիսանում են հուսալի համագործակիցներ, և ես կասեի՝ դաշնակիցներ միջքրիստոնեական և միջկրոնական ոչ հեշտ երկխոսության մեջ, որը մենք իրականացնում ենք համատեղ (mospat.ru, 15.07. 09):

Պատրիարքի խոսքը բնութագրում է Հայ և Ռուս Եկեղեցիների արդի հարաբերությունների ջերմությունն ու բարեկամությունը:

2010 թ. գարնանը տեղի ունեցավ Համայն Ռուսիայի Պատրիարք Կիրիլի այցը Հայաստանի Հանրապետություն: Նրա երկու արժեքավոր աշխատությունները թարգմանվել են հայերեն և պահվել Սուրբ Էջմիածնի թանգարանում: Տեղի ունեցավ նրա հանդիպումները Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ապա ԵՊՀ ուսանողների և դասախոսների հետ: Այս այցելության արդյունքում ստորագրվեցին երկու եկեղեցիների համագործակցության վերաբերյալ նոր փաստաթղթեր: Այսօր այդ հարաբերություններն սկսում են զարգանալ նոր ուղղություններով:

ԿՐՈՆՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆԸ ՀՅՈՒՍԻՍԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Մխիթար Գաբրիելյան

ազգագրագետ, պատմ. գիտ. թեկնածու

Կովկասյան տարածաշրջանի քաղաքական և հասարակական-մշակութային զարգացումները վերջին երկու տասնամյակում հասարակական տարբեր գիտությունների ուշադրության կենտրոնում են: Որպես Կովկասի հանդեպ գիտական հետաքրքրությունը պայմանավորող հանդես է գալիս առնվազն երեք գործոն. ա. տարածաշրջանում սկիզբ առած, որոշ դեպքերում՝ զինված ընդհարումների ու պատերազմական գործողությունների վերաճած էթնիկ հակամարտություններ, բ. կրոնի, մասնավորապես՝ իսլամի վերազարթոնք, այսպես կոչված իսլամական Վերածնունդ, ինչն ուղղակիորեն ազդում է տարածաշրջանի հասարակական ու մշակութային զարգացումների վրա, գ. Կովկասի ավանդականություն, որը տևական ժամանակ է, ինչ հանդես է գալիս որպես տարածաշրջանի յուրօրինակ «այցեքարտ»:

Կրոնական գործոնը, կրոնի քաղաքականացումն ու ծայրահեղական դրսևորումները վահաբիզմի տեսքով, էական ազդեցություն ունեն հատկապես Հյուսիսային Կովկասում հասարակական ու մշակութային զարգացումների վրա:

Սակայն, իսլամի՝ որպես էթնիկ հանրությունների կենսագործունեությունը պայմանավորող կրոնաբարոյական համակարգի, նշանակությունը տարածաշրջանում հասկանալու համար, հարկավոր է դիտարկել նաև նախախորհրդային ու խորհրդային շրջանում կրոնի ու կրոնականի զարգացման հիմնական միտումները:

Ա. Հյուսիսկովկասյան տարածաշրջանի տեղաբնիկների մեծամասնությունը սուննիթական ուղղության իսլամ է դավանում: Բացառություն են հիմնականում քրիստոնյա օսեթինները, արևելասլավոնական ուղղափառ տարրը (ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ), տարբեր պատմական ժամանակահատվածներում այստեղ հաստատված հայերը, հույները, այլ քրիստոնյա էթնիկ հանրություններ:

Բ. Հետազոտողները, Հյուսիսկովկասյան իսլամի կարևոր առանձնահատկություն են համարում վերջինիս՝ տարածաշրջանում բնակվող էթնիկ հանրությունների մշակութային առանձնահատկություններով պայմանավորված յուրօրինակ բնույթը: Իսլամը Կովկասում ունեցել է և ունի բազմագործառութային դերակատարություն և դրսևորվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այստեղ հարյուրամյակների ընթացքում տեղի է ունեցել նորմատիվային իսլամի յուրօրինակ «խաչասերում» տեղական ազգային մշակույթների հոգևոր համալիրների հետ, ինչի արդյունքում ձևավորվել է վերջինիս կենցաղավարման ինքնատիպ տարածաշրջանային ձևը, որի հիմքում, բնականաբար, ընկած են համաիսլամական սկզբունքները:

Գ. Իսլամի հաստատումը Հյուսիսային Կովկասում ունի երկար պատմություն: Իսլամի տարածման գործընթացն այստեղ սկսվել է յոթերորդ դարում՝ Հարավային Դաղստանից և շարունակվել ընդհուպ մինչև 18-19-րդ դարեր: Սակայն տարբեր պատմական ժամանակահատվածներում, նաև՝ ուշ միջնադարում, Հյուսիսկովկասյան տարբեր էթնիկ հանրությունների միջավայրում իսլամի ազդեցությունն ու դերակատարությունը նույնը չի եղել: Ավանդաբար, Հյուսիսային Կովկասի՝ իսլամի խորքային ազդեցությանը են-

թարկված ու հասարակական-մշակութային կյանքում վերջինիս նորմերն ամրագրած տարածաշրջանը համարվել է Դաղստանը: Փոքր-ինչ այլ են Կենտրոնական Հյուսիսային Կովկասի վայնախյան էթնիկ հանրություններով բնակեցված գոտում իսլամի դերակատարությանն ու ազդեցությանը տրվող գնահատականները: 19-րդ դարում, չնայած տարբեր էթնիկ հանրությունների միջավայրում դրսևորվող առանձնահատկություններին, Հյուսիսային Կովկասում ավարտին էր հասնում իսլամի վերջնական ամրագրման գործընթացը, ինչի վրա էապես ազդեց այս շրջանի դարակազմիկ իրադարձություններից մեկը՝ Կովկասյան պատերազմը իմամ Շամիլի գլխավորությամբ:

Դ. Խորհրդային կարգերի հաստատումը էապես փոխեց վիճակը նաև կրոնատածության ու ընդհանրապես՝ կրոնի հանդեպ վերաբերմունքի ասպարեզներում: Նպատակ ունենալով օգտագործել իսլամը սոցիալիստական հեղափոխության վերջնական հաղթանակի ու դեպի արևելք դրա տարածման գործում, խորհրդային իշխանությունը իր գոյության առաջին տարիներին, ինչպես և ցարական իշխանությունները Հյուսիսային Կովկասի նվաճման առաջին շրջանում, դեռևս հանդուրժող էր և իսլամի և ադաթի տարբեր դրսևորումների հանդեպ: Շարիաթական դատարանների իրավասության տակ էին համայնքային կարևորության վեճերի, խնդիրների կարգավորման հարցերը, եթե դրանք քրեական հանցանքի տարրեր չէին պարունակում: Սակայն մի քանի տարի անց արդեն քաղաքականությունը կտրուկ փոխվեց: Չնայած տարբեր տասնամյակներում կատարված որոշ սրբագրումներին, խորհրդային կրոնական քաղաքականությունը Հյուսիսային Կովկասում տեղավորվում էր աթեիզմի ու կրոնի դեմ անողոք պայքարի

տրամաբանության շրջանակներում: Վիճակագրական տվյալները նույնպես ասվածի ապացույցն են: ԽՍՀՄ տարիներին էապես կրճատվել էր հոգևոր հաստատությունների թիվը, գրեթե չէին գործում իսլամական կրթական հաստատություններ: Չնայած այս ամենին, ԽՍՀՄ-ում, ոչ միայն մուսուլմաններով բնակեցված տարածքներում, այդպես էլ չկարողացան հասնել կրոնի վերջնական դուրսմղմանը: Կարելի է ասել, որ կրոնը անցել էր ընդհատակ, իսկ կրոնական գիտակցությունը շարունակում էր պահպանել իր կարևորությունը:

Ե. ԽՍՀՄ փլուզումը ողջ եռխորհրդային տարածքում ուղեկցվեց կրոնատածության աննախադեպ աճով: Այս ամենի զուտ նյութականացված դրսևորումը եկեղեցիների, մզկիթների թվի աննախադեպ աճն էր: Հյուսիսկովկասյան բնակավայրերի մեծ մասում այսօր կա առնվազն մեկ մզկիթ, իսկ քաղաքներում ու խոշոր գյուղերում դրանց թիվն ավելի մեծ է: Դեռևս վերակառուցման շրջանում սկսեց աճել հոգևոր կրթություն ստացողների թիվը, որոնց մի մասն այսօր արդեն ակտիվ դերակատարություն ունի ոչ միայն կրոնական կյանքում, այլև հասարակական հարաբերություններում:

ԽՍՀՄ փլուզումը ստեղծեցին նաև կրոնական ակտիվ կապերի հաստատման հնարավորություններ: 1980-ական թթ. վերջին 90-ականների սկզբին ակտիվ կրոնական բնույթի հարաբերություններ ձևավորվեցին հյուսիսկովկասյան ու մերձավորարևելյան մուսուլմանական կազմակերպությունների ու կրթական հաստատությունների միջև: Իսլամի դիրքերի ամրապնդմանը մեծապես նպաստում է նաև այն հսկայածավալ գրականությունը, որը տարածվում է տարածաշրջանում: Ըստ տարբեր հետազոտողների մոտավոր հաշվարկների, շրջանա-

ռության մեջ գտնվող գրականության թիվն արդեն գերազանցում է 1000-ը: Դա ինչպես թարգմանական, այնպես էլ տեղական հոգևոր առաջնորդների ու հեղինակությունների հրատարակած գրականությունն է: Վերակառուցման շրջանում Հյուսիսային Կովկասում թույլատրվեց նաև իսլամական ուղղվածության թերթերի ու տարբեր պարբերականների հրատարակությունը: Այսպես, օրինակ, Դաղստանի մուսուլմանների հոգևոր վարչության <Ասսալամ> պաշտոնաթերթը լույս է տեսնում ռուսերեն, ավարերեն, դարգիներեն, կումիկերեն, լեզգիներեն, լաքերեն ու թաբասարաներեն: Նշված բոլոր գործոնները նպաստում են Հյուսիսկովկասյան տարածաշրջանում իսլամի դիրքերի ամրապնդմանը, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում ունեցած դերակատարության աճին, ավելացնելով նաև մի կողմից՝ հակազդեցության, մյուս՝ կողմից համագործակցության ու խաղաղ համակեցության ներուժը Հյուսիսկովկասյան տարածաշրջանում:

ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԵՐ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ռուզաննա Ծատուրյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ազգագրագետ

Բազմիցս խոսվել է հայոց եկեղեցական և ժողովրդական տոնացույցերի փոխառնչությունների և փոխներգործությունների մասին: Դարերի ընթացքում բազմաթիվ ժողովրդական ծիսակատարություններ, ավանդույթներ ներթափանցել և հաստատվել են եկեղեցական տոների արարողակարգում: Եկեղեցին ժամանակի ընթացքում այս երևույթների նկատմամբ դրսևորել է տարբեր մոտեցումներ՝ մերժման, պայքարի, արգելման, ընդունման, խրախուսման, բովանդակային մեկնաբանությունները կրոնականացնելու դիմաց որոշ ժողովրդական ավանդույթներ եկեղեցական ծիսաշարում ներառելու և այլն: Այս ամենի արդյունքում ձևավորվել էր իրավիճակ, երբ այնքան էին սերտաճել եկեղեցական և ժողովրդական տոներն ու տոնակատարությունները, որ հանրային ընկալումներում և պատկերացումներում գոնե քսաներորդ դարի սկզբին դրանք նույնացել էին:

Խորհրդային շրջանում հակակրոնական քարոզչության արդյունքում փոփոխություններ կրեց նաև տոնական համակարգը. մի շարք տոներ և ծեսեր, որոնք ունեին եկեղեցական և կրոնական բովանդակություն կամ ներկայացում, արգելվեցին և մարեցին, որոշների ազդեցությունը և զանգվածայնությունը մեղմելու նպատակով խորհրդային քարոզչամեքենան դրանք փոխարինեց նոր՝ խորհրդային բովանդակությամբ տարբեր

կարմիր տոներով. կարմիր կնունք, կարմիր զատիկ, մայիսի մեկ և այլն: Այս ամենի արդյունքում ավանդաբար նշվող տոները հանրայինից տեղափոխվեցին ընտանեկան միջավայր, ինչպես օրինակ՝ Ս. Ծնունդը, Զատիկը: Աստիճանաբար դրանց կրոնական մեկնաբանությունները մոռացվեցին և պահպանվեցին միայն տոների ներընտանեկան կենցաղավարման հատկանիշները. տոնական ուտեստների պատրաստումը, սեղանի հարդարում և այլն:

Հետխորհրդային շրջանում կրոնական ավանդույթների վերազարթոնքը սկսեց նույնացվել ազգային, էթնիկ արժեքների և ինքնության վերազարթոնքի հետ: Հայ առաքելական եկեղեցին իր վրա վերցրեց «ավանդական» եկեղեցական տոնացույցի վերականգնման առաքելությունը, ինչին ինքնին նպաստեց բազմաթիվ եկեղեցիների վերաբացումը: Եկեղեցիները հաճախ իրենց վրա էին վերցնում տեղերում տոների կազմակերպման և անցկացման խնդիրները, տոնակատարություններում ներգրավում համայնքի անդամներին, փորձում նրանց մոտ վերականգնել տոների ավանդական խորհուրդը՝ տոնակատարություններում ներառելով նաև ժողովրդական ավանդույթներ. այսպես՝ Տեռանընդառաջի տոնին եկեղեցու բակում խարույկ վառելը, Ս. Սարգսի տոնին եկեղեցում աղի բլիթի օրհնությունը, Ծաղկազարդին ուռենու ոստերի օրհնությունը և այլն: Մյուս կարևոր հանգամանքը, ինչի շուրջ աշխատում էր եկեղեցին, տոների միասնական նշման օրվա սահմանումն է: Խնդիրն այն է, որ հայկական տարբեր բնակավայրերում որոշ տոներ նշվում են տարբեր օրերի, օրինակ՝ Վարդավառը կամ Քրիստոսի պայծառակերպության տոնը Լոռու և Տավուշի մարզերում նշվում էին եկեղեցական օրացույցից տարբեր օրերի, Լոռու մարզում ընդունված սովորույթի համաձայն Սուրբ խաչի տոնը նշվում էր ողջ սեպտեմբեր ամսվա ընթացքում և այլն: Այն վայրերում, որտեղ տոների նշման օրը ընդամենը ոչ

բավարար տեղեկատվության արդյունք էր, եկեղեցուն հաջողվեց հաստատել միասնական տոնակատարությունների օրացույց. Օրինակ Վայոց ձորի մարզի որոշ լեռնային բնակավայրերում մինչև 2000-ական թթ. սկիզբն ընդունված էր Զատիկը նշել մարտի տասնութին, ձու ներկել մայիսի մեկին և միայն այդ համայնքներ հոգևորականների պարբերական այցելությունների շնորհիվ երիտասարդ սերունդը սկսեց կիրառել տոների նշման եղեղեցական օրացույցը: Իսկ այն բնակավայրերում, որտեղ ավանդական որոշ տոներ ունեին նշման կայունացած և կարծրացած ավանդույթներ և նշվում էին զանգվածաբար, եկեղեցական տոնացույցը և օրացույցը դեռևս չի ներառվել ժողովրդական արարողակարգ. Տավուշի և Լոռու մարզերում Վարդավառը շարունակում են նշել հուլիսի քսաներկուսին հաջորդող կիրակի օրը, Լոռու մարզի որոշ բնակավայրերում շարունակում են ողջ սեպտեմբեր ամսվա ընթացքում խուսափել պսակադրության արարողություններից, քանի որ սեպտեմբերը համարվում է «սրբախեչի» ամիս և այսպես շարունակ:

Վերջին տարիներին, երբ արդեն հասարակության լայն շերտեր ներգրավվել էին եկեղեցական տոնակատարություններում, եկեղեցին իր քաղաքականության մեջ կարծես որոշակի փոփոխություններ և շտկումներ մտցրեց՝ ձգտելով եկեղեցական տոնակատարությունները «մաքրել» ժողովրդական սովորույթներից ՝ փորձելով շեշտադրել տոների զուտ կրոնական և եկեղեցական իմաստն ու խորհուրդը: Այդ նպատակով շատ եկեղեցիներ սկսեցին հրաժարվել եկեղեցական տոների ընթացքում ժողովրդական համարվող արարողություններից. խաղուլիկավառությունից, մատաղի արարողության ժամանակ զոհ-կենդանուն օրհնելուց, ժողովրդական սովորույթների և եկեղեցական կանոնների տարընկալումները շտկելու նպատակով Հայ Առաքելական եկեղեցու առաջարկով պետական տոնացույցում ներառվեցին տաղավար տոներին հաջորդող մեռելոցի օրերը և այլն:

Արդյունքում, ժողովրդական տոնական արարողությունները շարունակում են բավականին կենսունակ մնալ և վերարտադրվել՝ իհարկե կրելով ժամանակի փոփոխությունները և ազդեցությունները: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ հանրային պատկերացումներում որպես «ավանդական ժողովրդական» տոնակատարությունների անցկացման հիմնական դերակատար ընկալվում է եկեղեցին՝ որպես ինստիտուտ և եկեղեցու տարածքը՝ որպես սրբազան վայր այդ ծիսակատարությունների անցկացման համար: Անկախ եկեղեցու դիրքորոշումից, Տեառնընդառաջի խարույկը մարդիկ ձգտում են վառել եկեղեցու մոմերից տարված լույսով, Ս. Սարգսի տոնին հատուկ աղի բլիթը տանում են եկեղեցի օրհնություն ստանալու և ապա միայն ճաշակում, Զատկի տոնի հավկիթները եկեղեցում պտտեցնելուց հետո են միայն համարվում ծիսական զորությամբ օժտված, Ծաղկազարդի ոստերը տուն են տանում միայն երկրատուն հերթերը հաղթահարելու արդյունքում հոգևորականի օրհնելուց հետո և այսպես շարունակ:

Ժամանակակից սպառողական հասարակության պայմաններում անգամ մշակույթը, այդ թվում կամ մեր երկրի դեպքում, առաջին հերթին ժողովրդական մշակույթը կարիք ունեն հանրահռչակման և տարածման: Ավանդական տոնական համակարգի՝ որպես այդ մշակույթի և հայ ինքնության խտացված և ընդգրկուն մի բաղադրիչի, հանրահռչակման և տարածման խնդրի հանդեպ պատասխանատվություն պետք է ստանձնի հանրային քաղաքականությամբ զբաղվող որևէ ինստիտուտ: Ստեղծված իրավիճակում առաջնային խնդիրը մինչ մեր օրերը պահպանված և վերարտադրող ժողովրդական/եկեղեցական տոնական մշակութային տարրերի պահպանումը, դրանց ավանդական խորհրդի ներկայացումն ու տարածումն է:

ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ

Դարգև Բարսեղյան
ԵՊՀ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Աշխարհի հնագույն ժողովուրդների ազգային հավատալիքները, որոնք ձևավորվում են տվյալ ժողովրդի պատմության վաղնջական ժամանակներում, որպես կանոն արտահայտում են տվյալ ժողովրդի աշխարհայացքային, իմացաբանական, ծագումնաբանական պատկերացումներն ու ընկալումները, որոնք բավականին երկար կյանք ունեն և անընդհատ գոյատևում են տվյալ ժողովրդի ողջ պատմության ընթացքում: Կրոնագիտության մեջ դրանք համարվում են կրոնի վաղ ձևեր, իսկ հասարակական ընդհանրական ընկալումներում ներկայանում են իբրև ժողովրդական հավատալիքներ կամ նախապաշարումներ: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ այդ հավատալիքներն ունեն աշխարհայացքային, ճանաչողական և պրակտիկ բնույթ, չնայած որ երբեմն ներկայացնում են իրականության աղճատված, աղավաղված պատկերը և հեռու են ժամանակակից գիտական աշխարհընկալումից: Ժամանակակից համաշխարհային և ազգային կրոններում ժողովրդական հավատալիքներն ունեն կայուն և ինքնուրույն տեղ, ներառվել են այդ կրոնների դավանաբանական, ծիսապաշտամունքային համակարգ և զարգանում են ընդհանուր օրինաչափությունների շրջանակներում՝ երբեմն էական ազդեցություն ունենալով տվյալ կրոնական համակարգի ընդհանուր իմացաբանական, աշխարհայացքային, կրոնապաշտամունքային պատկերացումների վրա:

Այս առումով բացառություն չեն նաև հայ ժողովրդական հավատալիքները, որոնք չնայած իրենց ծագման բազմազանությանը և արխաիկ բնույթին, հասել են մինչև մեր օրերը: Այսօր, գիտատեխնիկական առաջընթացի ժամանակակից պայմաններում, թվում է, թե հայկական ժողովրդական հավատալիքների մասին խոսելն այնքան էլ տեղին չէ և ժամանակավրեպ է: Սակայն իրականում դրանք այսօր էլ գոյություն ունեն և հայ ժողովրդի ինքնության կարևորագույն և անբաժանելի մասն են՝ իրենց էական գծերով, հիմնական առանձնահատկություններով և աշխարհայացքային ու իմացաբանական նշանակությամբ:

Ժողովրդական հավատալիքները դժվար է միանշանակ համարել հասարակական գիտակցության ձև, քանի որ դրանք հաճախ անհատական, անկայուն և բնազդային բնույթ ունեն: Ժամանակակից հայերի մոտ, կապված տարիքի և սեռային պատկանելության հետ, առկա են ամենատարբեր նախապաշարումներ և անհավատ պատկերացումներ, որոնք արդյունք են ինչպես իրականության ոչ ճիշտ ընկալման, պատճառահետևանքային կապերի սխալ գիտակցման, այնպես էլ ավանդական հավատալիքների մեծ ազդեցության և դրանց կենցաղային նշանակության կարևորման: Միաժամանակ պետք է նշել, որ այդ հավատալիքների վերապրուկները նեղ անձնական բնույթի են, դրսևորվում են կոնկրետ անհատների գիտակցության մեջ և կրում են զուտ սուբյեկտիվ բնույթ: Հնագույն հավատալիքների վերապրուկները նախապաշարումների և անհավատության տեսքով հատկապես հաճախակի են ի հայտ գալիս կենցաղում և առաջին հայացքից թվում են «անմեղ» ինչ որ գործողություններ կամ երևույթներ (աղի թափվելը, հայելու կոտրվելը, ձախ ոտքից արթնանալը, ճանապարհը կտրող սև կատվի հանդիպելը, սուրճի բաժակով գուշակություններ անելը, չար աչքի ներգործությունը և այլն), ո-

րոնք կարող են փոխել իրականությունը, ազդել մարդկանց վրա կամ ուղղորդել որոշակի գործողություններ:

Ժամանակակից հասարակությունում առկա հնագույն հավատալիքների վերապրուկների ուսումնասիրությանը այսօր մեծ կարևորություն է տրվում, քանի որ դրանց միջոցով հնարավոր է նաև վեր հանել հայ ժողովրդի ինքնության, իդենտության և ազգային առանձնահատկությունների շատ էական ու բնորոշ գծեր: Այդ համատեքստում հայ ժողովրդական հավատալիքների ժամանակակից վերապրուկների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում ենթագիտակցական բնույթ ունեն և առավելապես սերնդեսերունդ փոխանցված և հասարակական գիտակցության մեջ արմատացած պարզունակ սովորություններ են, որոնք ունեն խորհրդանշական բնույթ: Պետք է նաև նշել, որ հայ իրականության մեջ այսօր տիրապետող արխետիպերի և ազգային բնութագրիչ հատկանիշների ու բնավորության գծերի մի մասն ունեն հավատքային նշանակություն կամ ծագում: Այդ պատճառով առավել կարևոր է դրանց համակողմանի վերլուծությունն ու ժամանակակից գիտական արժևորումը, քանի որ դրանք հաճախ թաքնված բնույթ ունեն և գործառնում են ենթագիտակցական ոլորտում: Համաշխարհային կրոնագիտական փորձը ցույց է տալիս, որ ժողովրդական հավատալիքներն ու նախապաշարումները մարդուն ուղեկցում են նրա ողջ պատմության ընթացքում և դժվար թե վերանան, քանի որ հասարակական գիտակցության մեջ դեռևս կա այդ հավատալիքների մեծ «պահանջարկ»: Ուստի ժողովրդական հավատալիքների նմանատիպ վերապրուկներն անընդհատ գոյատևելու են և ունենալու են կիրառական նշանակություն:

ՆԵՐՓԱԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Ժորա Պապոյան

ԵՊՀ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ

1. *Ներփակ գիտելիքների ավանդական ձևերից են ալքիմիան, աստղաբաշխությունը և մոգությունը:*
2. *Դրանք եղել են դեռևս հերմետիստական ավանդությունում և ստորին հերմետիզմի մաս են կազմել:*
3. *Ալքիմիայի նախադրյալները ձևակերպված են Հերմես Եռամեծարի «Զմրուխտյա տախտակներում» և կարծիք կա, որ դրանց ակունքները Ատլանտիդայի ավանդություններն են:*
4. *Ալքիմիական գործընթացի (մագիստերիա) հիմնական նպատակը տարբեր մեկնաբանություններ ունեն:*
5. *Ալքիմիական գործընթացի տարբեր փուլերը և ալքիմիական «հարսանիքը» կամ «ամուսնությունը»:*
6. *Փիլիսոփայական քարի գաղտնիքը և նպատակները (համընդհանուր դեղամիջոց, պրոեկցիական փոշի, անմահական ջուր, սպիտակ փոշի, հաց կամ «երկնային մանանա»):*
7. *Կ. Ցունգի ալքիմիայի հոգեբանական մեկնաբանությունը կրում է խորքային հոգեբանության ծայրահեղությունների կնիքը:*
8. *Ալքիմիան ներկայացվել է նաև էրոտիկական սիմվոլների լեզվով:*
9. *Արտաքին ալքիմիայի անհաջողությունները և ներքին ալքիմիայի զարգացումը Արևելքում:*

ԿՐՈՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Գ. Քալաշյան
ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ

Համաշխարհայնացման համընդգրկուն և միահյուսող քաղաքականությունը «ապագենացման», ազգամշակութային և անտրոպոսոցիոգեն բնույթի բազմապիսի հիմնախնդիրներ է առաջադրել համամարդկային և միջքաղաքակրթական ոլորտներին: Արմատական այդ քաղաքականությամբ է պայմանավորված նաև XX դարի վերջին քառորդի աշխարհաքաղաքական զարգացումների ընդհանուր ուղղվածությունը և XXI դարի կրոնական մարտահրավերների հնարավոր զարգացումների դինամիկան:

Լինելով բազաբևեռ և բազմամակարդակ իրականություն, գաղափար, հայեցակարգ, ուսմունք և պրակտիկա, իր գաղափարախոսությամբ, ռազմավարությամբ և այլ ծրագրերով համաշխարհայնացումը մարդկությանը լուրջ երկընտրանքների առջև է կանգնեցրել: Համաշխարհայնացումն ակամա հակադրվում է նաև ազգային ինքնությանը և ազգամշակույթին ավանդույթներին: Ճիշտ է, համաշխարհայնացման վերազգային գաղափարները դեռևս ամբողջական հստակ ծրագրեր չունեն, սակայն անուրանալի է և այն, որ արդեն 1990-ականներից սկսած այն դարձել է արդիականության հրատապ հիմնախնդիրներից մեկը: Համաշխարհայնացման մոդեռն և հետմոդեռն միտումներով են կյանքի կոչվել նաև «կրոնական նոր շարժումները»: Եվ քանի որ այդ ոլորտում ասպարեզ իջած հիմնահարցերը ուղղակի կամ միջնորդավորված հարաբերվում են կրոնների գոյաբանական, մարդաբանական, արժեքաբանական, բարոյական և այլ ըմբռնումների հետ, այդ ամենն էլ պայմանավորել են ա-

վանդական կրոնների զգուշավոր վերաբերմունքը համաշխարհայնացման արատավոր կողմերի հանդեպ:

Համաշխարհայնացման քաղաքականությամբ կյանքի է կոչվել միանգամայն նոր արժեքների կրող «ժողովրդական նոր զանգված», ամբողջական տեսք է ստացել «զանգվածային մշակույթի» ներդրման և ազգային արժեքների «ապագենացման» քաղաքականությունը: Արդյունքում ճնշվում և նվազագույնի է հասցվում անհատականության դերը, երկրորդական պլան են մղվում հոգևոր և մշակութային ավանդական արժեքները, սուբյեկտիվ «ես»-ը փոխարինվում է «անորոշ «մենք»-ով: Իսկ հոգևոր կյանքում առաջնություն է վերապահվում «զանգվածային գիտակցությունը», որը պահանջում կուրորեն հետևել «միօրինականացման» հրամայականին և հասարակական ու անհատական կեցության մեջ արմատավորում է «վերազգային ստանդարտների» հիման վրա ձևավորված գիտակցություն:

Համաշխարհայնացման քաղաքականության տեխնոլոգիական մոդելներն, այսպիսով, լուրջ մարտահրավերներ են ավանդական կրոնների համար, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ 1) «նոր արժեքների» ներդրմամբ ավանդական կրոնների «նեղ» արժեհամակարգերի գործառնական շրջանակների էական սահմանափակում («սահմանափակող» հակազդեցություն) և 2), վերազգային արժեքներով սնված և ապազգային ուղղվածության կրոնական նոր շարժումներ (դենոմինացիաներ, ներփակ համայնքներ, խարիզմատիկ խմբեր և այլն) «արտադրելու» և արմատավորելու պրակտիկա:

Համաշխարհայնացվող հոգևոր իրականության համատեքստում փորձ է կատարվում ստեղծել և արմատավորել «միասնական ու նոր հոգևոր իրականություն», որն ուղեկցվում է ազ-

գայինին հակադիր «համամարդկային» և «զանգվածային» նոր արժեքների առաջադրմամբ և դրանց համապատասխանող հոգևոր նոր հարաբերությունների արմատավորմամբ: Այլ կերպ ասած՝ ազգային արժեքների կարծեցյալ «սահմանափակությունների» հաղթահարումը համարվում է այն հենքը, որն անհրաժեշտ է համարվում որակապես նոր գործառնական «հոգևոր աշխարհակարգ» հաստատելու համար: Առաջնահերթություններ են համարվում նաև «ես»-ի ազատականացումը», «նոր քաղաքակրթական արժեքներ» ձևավորելու պահանջները և այլն, որոնք ուղղակի կապված են կրոնի իբրև սոցիոմշակութային երևույթի հետ:

ԽՍՀՄ փլուզումին հաջորդող տարիներին հետխորհրդային տարածքում տեղ գտած «հոգևոր փոխակերպման» ձգտումները գրեթե ամենուր լուրջ խնդիրներ են առաջադրել ազգային ինքնության և հոգեկերտվածքի առջև: Փաստ է և այն, որ ինչպես այլ, այնպես էլ հայ ժողովրդի ազգային և հասարակական կյանքը վրդովող ազդեցիկ երևույթներից են դարձել օտարամուտ և կասկածելի ծագում ունեցող կրոնական հոսանքների (ոչ ավանդական պաշտամունքներ, «նոր դարի», «այլընտրանքային», սինկրետիկ, գաղտնագիտական կրոնական շարժումներ, զանազան դենոմինացիաներ, ներփակ խմբեր և այլն) անընդհատ ծավալումը և որոշակի սահմաններում անվերահսկելի գործունեությունը:

Ազգային արժեքների և ինքնության նկատմամբ դրանց անհանդուրժողական վերաբերմունքն ամենից առաջ դրսևորվում է նրանում, որ այդ շարժումներն իրենց գործունեությունը խարսխում են ավանդական արժեհամակարգերի նկատմամբ բացարձակ մերժողական մոտեցման, ինչպես նաև՝ կոսմոպոլիտիզմի և վերազգային արժեքների քարոզչության վրա: Հատկապես ոչ ավանդական, ամբողջատիրական և ապակառուցողական համայնքներն իրենց պրակտիկ գործունեության ան-

կյունաքարն են համարում հավատացյալների աշխարհայացքային արժեհամակարգերի միակողմանի վերափոխումը: Այդ սկզբունքների պրակտիկ իրագործման նպատակով կրոնական նոր շարժումների կողմից ծրագրված կերպով արմատավորվում է հավատացյալների մտածողության, զգացմունքների, գործողությունների և վարքագծի նորմերի հարկադրական փոխություններ: Հաշվարկը չափազանց պարզ է՝ ավանդական հոգևոր արժեքների մերժման ճանապարհով փոփոխության ենթարկել ինչպես հավատացյալի վարքը, այնպես էլ՝ ինքնության որոնումները:

Քվազիկրոնական այդ շարժումների էությունը բնութագրող իրողությունների շարքում պետք է քննարկել նաև «համաշխարհայնացման հոգևոր ուղղվածության» և դրա հետևանքով ասպարեզ իջած «կրոնական վերածնության» տեսակետները: Թե համաշխարհայնացման քաղաքականությունը որքանով է նպաստում «կրոնական վերածնությանը», կարելի է դատել ավանդական կրոնների և քվազիկրոնական շարժումների բնութագրիչ գծերի համեմատականով: Ավանդական կրոնների և աղանդավորական շարժումների միջև միշտ էլ կարելի է մատնանշել հավատքային, պրակտիկ և կառուցվածքային որոշակի ընդհանրություններ: Սակայն դրանք արտաքին են և պատահական, ինչը թույլ է տալիս վստահաբար պնդել, որ համեմատվող կողմերի միջև անհնարին է հավասարության նշան դնել:

Անկախ այն բանից, թե ձևավորման և գործառնության ինչպիսի որակական առանձնահատկություններով են բնութագրվում այդ աղանդները, պատկանում են այսպես կոչված ավանդական թե մոդեռն թևերին, ավելի քան ակնհայտ է՝ ա) «համոզմունքի» ուժով կազմավորված ցանկացած աղանդավորական կառույց որպես կանոն լիովին կամ մասնակի օտարված է այն ազգի պատմական և ազգամշակութային արժեքներից, ո-

րի շրջանակներում գործում է: Լինելով օտարածին երևույթ, աղանդը չունի և չի կարող ունենալ ազգային նկարագրություն, հետևաբար որևէ ընդհանրություն չունի ազգակրոնական և ազգամշակութային ինքնության հետ, բ) հանդես գալով «բացառիկության» գաղափարի վրա կառուցված ներփակ ընդհանրության որակով, ցանկացած աղանդ ըստ էության բնութագրվում է ոչ միայն ներփակությամբ, այլև՝ արմատական դիրքորոշմամբ, գ) լինելով օտարածին երևույթ՝ ցանկացած աղանդի գործունեություն ուղղակի կամ միջնորդավորված կերպով կապված է ազգային արժեքների քարոզչության, հետևաբար ազգային սովորությունների և ավանդույթների մերժման հետ: Աղանդների հոգևոր-հասարակական այս պրակտիկան օբյեկտիվորեն ուղղված է ազգային հոգեկերտվածքի և ինքնության դեմ:

ԱԶԳԱԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Գ. Ա. Սարգսյան
ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ

XX դարավերջի և XXI դարասկզբի կրոնական մարտահրավերների շարքում ավելի ու ավելի է ընդգծվում ազգակրոնական ինքնության և ամբողջատիրական ու ապակառուցողական աղանդների գաղափարախոսության և պրակտիկայի շարունակ աճող հակասությունը:

Կրոն – ազգային ինքնություն բարդամահարթ հարաբերություններն ունեն ինչպես պատմական, այնպես էլ արդիական կարևորություն, քանի որ սերտորեն կապված են ինչպես հոգևոր մշակույթի, այնպես էլ ազգամշակութային, կրոնական և ազգային ընդհանրությունների հիմնախնդիրների հետ և որպես կանոն իրենցով պայմանավորում են ազգային և կրոնական ինստիտուտների հարաբերությունների էությունն ու տրամաբանական ուղղվածությունը: Անուրանալի է նաև ազգային գործոնի դերը կրոնական գործընթացների զարգացումներում, ինչպես նաև կրոնական գործոնի դերը ազգային ընդհանրությունների պահպանման և վերարտադրման գործում: Նաև այդ համատեքստում է եկեղեցին դիտարկվում որպես ազգության պահպանման ազգային արժեք, այդ շրջանակներում են քննարկվում նաև եկեղեցի-ազգային ինքնություն բազմաստիճան կապերի ու հարաբերությունների դինամիկան:

Ազգ-կրոն բազմահարթ փոխհարաբերությունների, ազգակրոնական ինքնության դրսևորման տարբեր երևույթների ձևակազմական և գործառնական առանձնահատկությունների կրոնագիտական, սոցիալ-փիլիսոփայական, մարդաբանական, սոցիոլոգիական, էթնոսոցիոլոգիական, սոցիալ հոգեբանական,

ազգահոգեբանական, ազգագրական և այլ ուսումնասիրություններն ակնհայտորեն վկայում են, որ ազգային ինքնության հիմնախնդիրների նկատմամբ պաշտոնական դավանանքային համակարգերի (կամ ավանդական կրոնական կառույցների) և կրոնական աղանդների (ներփակ համայնքների, դենոմինացիաների, խարիզմատիկ խմբերի և այլն) վերաբերմունքը ինչպես ազգային, այնպես էլ խմբային ու անձնային մակարդակներում բևեռանում և որոշակի սահմաններում տրամագծորեն հակադրվում են միմյանց:

Ազգակրոնական ինքնությունը դրսևորվում է տարբեր ձևերով ու մակարդակներով, որոնք պայմանավորված են ինչպես հոգևոր-մշակութային, այնպես էլ տնտեսական, քաղաքական, հասարակական, հոգեբանական և այլ գործոններով: Այն հանդես է գալիս միանգամայն բարդ և փոխկապակցված երևույթների ամբողջության տեսքով, որը հասարակական, անձնային և խմբային մակարդակներում ի ցույց է դնում ազգային և կրոնական ընդհանրությունների փոխկապակցվածությունը, որոնք տարասեռ կապերի և փոխազդեցության մեջ են գտնվում ազգամիջյան և միջքաղաքակրթական հարթությունների հետ:

Ազգային, կրոնական, ազգակրոնական և մշակութային ինքնությունն ունի նաև տարածական նկարագիր, չերտավորված է անձնային, խմբային, ներհասարակական, ներմշակութային, ներազգային, ժողովրդագրական և այլ մակարդակների, որոնք գործառնում և վերարտադրվում են ազգային և կրոնական պահանջմունքների «սակրալ տարածքների» շրջանակներում: Ազգակրոնական ինքնությունը սերտորեն առնչվում է նաև վերազգային և վերհավատքային տարասեռ երևույթների և դրանց արժեքային կողմնորոշումների հետ, որի պատճառով ազգակրոնական ինքնությունը սահմանների որոշակիացման կարիք ունի: Այդ համատեքստում է դրսևորվում նաև «ազ-

գակրոնական սիյուռք» երևույթը, որը միջազգային տրանսլոկալ ազգակրոնական հանրությունների շրջանակներում առաջնահերթություն է դարձնում ազգային և կրոնական փոքրամասնությունների ինքնության հիմնահարցը:

Հետխորհրդային ժամանակաշրջանի կրոնական մարտահրավերները, որպես կանոն, կապված են ամբողջատիրական և ապակառուցողական կրոնական աղանդների աննախադեպ ծավալման և վերջինս ուղեկցող դավանափոխության (կոնվերսացիայի) գործընթացների հետ, որոնք հավաքական կերպով բնութագրել որպես ազգակրոնական ինքնության արմատական փոփոխություն:

Ամբողջատիրական և ապակառուցողական կրոնական աղանդների պրակտիկ գործունեությամբ հիմք դրված կրոնական, ազգային և մշակութային կոնվերսացիան, ազգամշակութային ինքնությանն օտար սինկրետիկ և էկլեկտիկ դավանանքներ և «նոր հայտնություններ» արմատավորելու արատավոր պրակտիկան ուղեկցվում է ազգակրոնական և ազգահոգեբանական գործոնների «համատարած արժեզրկմամբ»:

Ինչպես ազգային և հասարակական, այնպես էլ ազգահոգեբանական տեսանկյուններից արդի աղանդավորական այլադավանությունը խարսխվում է հավատացյալի մտքի և վարքագծի «համատարած վերահսկողության» վրա: Իբրև շարունակական գործընթաց այն ուղեկցվում է նաև համայնքի անդամների սուբյեկտիվ ընկալումների (գիտակցության, նպատակային ուղղվածության, գործողությունների, կողմնորոշման, դիրքորոշման և այլն) հարկադրական-համակարգային փոփոխությամբ, ինչը նպատակ է հետապնդում «նորացնել» համայնքների ինքնությունը և դրանց սուբյեկտիվ ընկալումները, կարգավորելի և վերահսկելի դարձնել համայնքի անդամների համոզմունքները:

Ամբողջատիրական և ապակառուցողական աղանդների հոգևոր պրակտիկան սերտորեն կապված է նաև հավատացյալի

վարքագծի հսկողության, ավելի ճիշտ՝ անհատականության (ինքնության) ամեն մի դրսևորում ճնշելու, այդ համակարգից ազգայինը օտարելու հետ: Այդ նպատակով էլ աղանդներում արմատավորվում և հետևողականորեն իրականացվում է հաղորդակցական վերահսկողություն: Աղանդը ոչ միայն խստորեն հսկում և կարգավորում է համայնակաների հոգևոր-հասարակական «ներքին» միջավայրը, այլև՝ արտաքին (օտար, շատ անգամ՝ թշնամական) միջավայրի (շրջապատող աշխարհի) հետ համայնակաների կապերն ու հարաբերությունները, որով սահմանափակում և «կառավարելի է դարձնում» հավատացյալների անհատական գիտակցությունը, վերահսկում և ենթակայական հարաբերություններ է հաստատում «ես»-ի ամեն մի դրսևորման նկատմամբ:

Աղանդներում «բացարձակ», «միակ և ճշմարիտ հավատի» որակով մատուցվող «նոր հայտնության» արմատավորումը իսպառ բացառում է այլընտրանքային ցանկացած տեղեկատվության ներհոսքը համայնք: Սեփական «բեռնավորման լեզվի» ներդրմամբ ամբողջատիրական աղանդներում արմատախիլ է արվում խորհելու և վերլուծելու անհատի հնարավորությունները, աղանդավորները դառնում են «կույր» և «համր», իսկ համայնքը վերածվում է արտաքին (թշնամական) միջավայրին հակադրվող ներփակության: Աղանդի «ընտրյալության» արմատավորմամբ ոչ միայն ամրապնդվում է համայնքի հետ կապերը, այլև սեփական «միակ և բացառիկ ճշմարիտ հավատը» պաշտպանելու անհրաժեշտությունը, որն ուղեկցվում է ամբողջատիրական և ապակառուցողական աղանդներին բնորոշ «վախի մանիպուլյացիայի», աշխարհը բարու (սեփականի) և չարի (օտարի) հակադիր ոլորտների մասին ուսմունքի, ներփակ «ֆոբիականության» և հոգևոր ու հասարակական «բացասական ծրագրավորման» այլ «որակների» արմատավորմամբ:

ԽԱՉ-ԹՐԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԻՄԱՍՏԻ ՈՐՈՇ ԿՈՂՄԵՐ

Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան

1. Խաչի հնագույն խորհուրդները երկուսն են. պաշտպանություն և քառորդություն: Որպես պաշտպանական նշան այն կիրառվել է բոլոր ժողովուրդների կողմից (արխետիպային է)՝ նաև նախքան քրիստոնեության հիմնական խորհրդանիշը դառնալը և Հիսուս Քրիստոսի մարմնավորումը ճանաչվելը: Նույնքա՛ն լայն տարածում է ունեցել խաչի քառորդության խորհուրդը՝ որպես աշխարհի չորս կողմերի, չորս տարերքների, նաև երկնքի, Արեգակի տարեպտույտի չորս հիմնական կետերի և այլ համընդհանուր-տիեզերական գաղափարների արտահայտություն:
2. Առնվազն բրոնզե դարից սկսած խաչի խորհուրդը միանում է թրի խորհրդին և՛ արտաքին ձևի, և՛ պաշտպանական հատկությունների տեսակետից: Թուրը սկսում է նույն կերպ կիրառվել, օրինակ, տոմարական հասկացություններ փոխանցելու համար, իր վրա է վերցնում խաչի Տիեզերական ծառի իմաստը, միախառնելով կայծակ-վիշապի և աստվածային պատժի խորհուրդները: Մյուս կողմից, խաչը, հատկապես քրիստոնեության մեջ սկսում է դիտվել որպես զենք չարիքի դեմ և կնիք, որով կարելի է փակել չարի ճանապարհը:
3. Հիսուսը, դիտվելով որպես վիշապամարտիկ, արդեն իսկ Նոր կտակարանում հանդես է գալիս որպես հրաշալի թրի տիրակալ, իսկ Հայտնության մեջ նրա բերանից երկսայր թուր է ելնում: Ժողովրդական զրույցների մեջ Տրդատի Հավլունի թուրը Լուսավորիչն օծում է որպես խաչ: Ման-

բանկարներում և խաչքարերի վրա խաչն է ծառայում որպես զենք, որով Հիսուսը կամ սրբերը կռվում են վիշապների կամ սատանայի դեմ:

4. Համաշխարհային դիցաբանության մեջ կայծակ (երկնաքարի երկաթից կռած) թրերի տերերը որպես օրենք ունեն վիշապային էություն: Այդպիսին են Ներիգալը (որն ինքն էլ պաշտվել է որպես թուր), Ինդրան, Սասնա Փոքր Մհերը, Հիսուսը, Ութը Գենդրագոնի որդի Արթուրը: Հիսուսը որպես վիշապ հանդես է գալիս նորկտակարանյան մի քանի դրվագներում, իսկ հայկական դարբնական ծեսում նրա մեխերը խորհրդանշական ձևով ամրացվում են ճիշտ այնպես, ինչպես Մհերի կամ Արտավազդի շղթաները:

5. Գուշ թագավորի և Հավլունի թրի մասին առասպելը, հնարավոր է, ոչ միայն նման է, այլև միևնույնն է իռլանդական Արթուրի և Էքսկալիբուր (Գողպատյա) թրի առասպելի հետ և ծագում է հնագույն հյուսիսմիջագետքյան Ներգալի և նրա հայասական զուգահեռ Ուգուրի չպահպանված առասպելից: Միմյանց հարևանությամբ ապրող հայերը և գալաթացիները կարող էին ամեն մեկը յուրովի մշակել միևնույն սյուժեն, ըստ որի Ավալոնում (խուռիական Խավլում դարբնական կենտրոն-քաղաքում, 20-րդ դ.՝ զազայաբնակ Ավլոն գյուղախումբ) հրաշալի երկնային պողպատից պատրաստված թուրը կարող է պատկանել միայն այն քաջին, որը կարող է այն դուրս քաշել պահապանքարից (= բերել երկնային քարը, դուրս քաշել չարքի գլխի տակից և այլն), իսկ նրա մահից հետո թուրը պետք է նետվի լիճը (հայկ. տարբ.՝ Խաչվա) և դուրս բերվի միայն, երբ գա արժանավորը: Լճի հայկական անվանումը ևս մեկ անգամ շեշտում է խաչի և թրի նույնությունը: Այստեղ

թուր-խաչը ունի և՛ զոհի, և՛ զենքի իմաստը և դրանով իսկ նույնանում է խաչ-թուր-զոհ Հիսուսի խորհրդի հետ:

6. Մետաղյա խաչերը, այդ թվում՝ խաչվառը, ծիսական պրակտիկայում կիրառելը նույնանում է մետաղյա իրերի, այդ թվում՝ թրի կիրառության հետ կենցաղում և առասպելաբանության մեջ: Այդ կիրառությունը նույնպես շարունակում է խաչի և թրի նախնական պաշտպանական խորհրդապաշտությունը, որին միանում է նաև մետաղի զորությունը:

ՀԱՅՈՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՊՀ-ՀԱԻ

Հետազոտությունները հնարավորություն տվեցին բացահայտել հայոց կրոնական վարքագծի տարիքային առանձնահատկությունները խորհրդային և ետխորհրդային ժամանակաշրջանում:

Եթե խորհրդային շրջանում հավատքի հիմնական կրողը տարեցներն էին, ապա 21-րդ դարասկզբին հակառակ պատկերն է նկատվում: Ներկայում առավել ընդգծված կրոնական վարքագիծ ունեն երիտասարդները և մասամբ՝ միջին տարիքային խմբի ներկայացուցիչները: Այդ երևույթը շատ հստակ երևում էր հայոց ներէթնիկ առանձին խմբերի կրոնական վարքագծի տարբեր տեսանկյուններով կատարված հետազոտություններում (այն է՝ կրոնի նկատմամբ վերաբերմունք, հավատացյալի դավանաբանական ուղղվածություն, հավատքի ձևավորման տարիքային բնութագիր, եկեղեցի կամ քրիստոնեական այլ սրբավայր այցելության հաճախականություն և այլն):

Պատմահամեմատական հետազոտությունների այս համալիրում հիմնականում իջևանցիների օրինակը բավական է ընդհանուր պատկերացում կազմելու ավելի քան քառորդ դարի ընթացքում հավատքի վարքագծի տարիքային կտրվածքով կատարված այդ փոփոխությունների միտումների բացահայտման վերաբերյալ, որը, մասնակի առանձնահատկություններով հանդերձ, բնութագրական է ողջ Հանրապետության համար:

Բնակչության կրոնական վարքագծի տարիքային բնութագրի փոփոխությունները խորհրդային և ետխորհրդային համակարգերում հետևյալ պատկերն ուներ (հետազոտական տվյալները ներկայացված են 1980 և 2008 թվականների համեմատական համատեքստում):

- *Հավատքի վարքագիծը երիտասարդության շրջանում աճել էր շուրջ 4 անգամ (6.8% - 24.4%):*
- *Միջին տարիքային խմբի կրոնական վարքագիծն աճել էր 2.5 անգամ (12% -30.5%):*
- *Տարեցների կրոնական վարքագիծ՝ շատ մասնակի էր աճել (13.7% -15.2%):*
- *Հավատքի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը երիտասարդության շրջանում նվազել էր շուրջ 5 (16.3%-3.1 %), իսկ միջին սերնդի մոտ՝ 3 անգամ (20.8%-6.7 %): Այս առումով համեմատաբար անկումը փոքր էր տարեցների վարքագծում՝ 2,2 անգամ (9.7% - 4.3 %):*
- *Կրոնի նկատմամբ ակտիվ մերժողական վերաբերմունքը բավականին ցածր էր թե՛ խորհրդային, և թե՛ ետխորհրդային ժամանակաշրջանում (ընդհանուր առմամբ շուրջ 0. 6 %), որը շատ մասնակի առավելություն ուներ միայն խորհրդային միջին սերնդի վարքագծում (1.6%):*
- *Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների տեսակետից, 21-րդ դարասկզբին հատկապես առանձնանում էին միջին (19,5%) և երիտասարդ սերնդի (15,9%) ներկայացուցիչները: Տարեցների դիրքորոշումն այս հարցում բավականին ցածր էր (6,1%):*
- *Հայ Ավետարանական եկեղեցուն հարողների տեսակետից, չնայած տարածման շատ ցածր մասշտաբներին, կրկին ա-*

ռանձնանում էր միջին (2.4%) և երիտասարդ սերունդը (3.0%):

- Հավատքի ձևավորման տարիքային բնութագրի տեսանկյունից դարձյալ ամենատարածվածը կրտսեր տարիքային խումբն էր (մինչև 29 տարեկան՝ 40.2%): Ուշագրավ է, որ այս առումով մյուս գլխավոր մոտիվացիան իրենց ի ծնե հավատացյալ-քրիստոնյա համարելու ընկալումն էր (19,5%): Ի դեպ, չնայած կապանցիների մոտ ի ծնե հավատացյալ-քրիստոնյայի այդ ընկալումը երկրորդական պլան էր մղված (5.2%), սակայն այստեղ գլխավորապես երիտասարդ տարիքային այդ շրջանն էր համարվում հավատքի ձևավորման հիմնական ժամկետը՝ պատանեկության ընդգծված առավելությամբ (մինչև 29 տարեկան՝ 78.5%, այդ թվում մինչև 17 տարեկան՝ 62.3%):
- Եկեղեցի կամ քրիստոնեական այլ սրբավայր այցելության հաճախականության առումով դարձյալ ամենաակտիվը կրտսեր (12. 8%) և միջին սերնդի (17.7%) ներկայացուցիչներն էին: Բնականաբար, սրբավայրեր չայցելողների համալիրում նրանք ամենափոքրածավալ տարիքային խմբերն էին:
- Զուտ կրոնական հավատքին առնչվող՝ տարիքային ոլորտում տեղի ունեցած այդ փոփոխությունները գրեթե ոչնչով չէին տարբերվում բնակչության տոնական վարքագծում կատարված որակական տեղաշարժերից: Թե՛ կրոնական, և թե՛ տոնական վարքագծերում տարիքային առումով կատարված փոփոխություններն ունեին միևնույն մոտիվացիոն բնութագիրը, նամանավանդ, որ հավատքի տեսանկյունից ակտիվ և ժխտողական դիրքորոշումները համապատասխանում էին կրոնա-ավանդական և խորհրդային տոների հարաբերակցությանը:

- Բնակչության կրոնական վարքագծում տարիքային բնութագրի հետ կապված այդ փոփոխությունները մեծամասամբ պայմանավորված էին միմյանց սերտորեն փոխկապակցված գործոններով. նախ՝ համազգային զարթոնք երևույթով, որն առավելապես ուներ էթնո-հոգեբանական արժեքային երանգավորում, և որը բնութագրական էր 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին:
- Նշված փոփոխությունները պայմանավորող թերևս ամենագլխավոր գործոնը դա նորանկախ պետության գաղափարադաստիարակչական, կրթական քաղաքականությունն է, որը խորհրդային-հակակրոնական գաղափարախոսությանը հակընդիր ա. ժևորելով հայոց ազգային-կրոնական ավանդույթները, կատարում է նոր հասարակարգին՝ նոր սերդի ինտեգրման կարևոր գործառույթ:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ԱՆՁԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Էլինա Ասրիյան
ԵՊՀ, Ընդհանուր հոգեբանության ամբիոն, ասիստենտ

Խորհրդանիշի ժամանակակից հետազոտումը անհնարին է թվում առանց այդ ֆենոմենի գենեզիսի, էվոլյուցիայի, գործառնության ուսումնասիրման: Մինչ այսօր գիտության և մշակույթի ոլորտներում կուտակվել են խորհրդանիշ հասկացության բազմաթիվ սահմանումներ: Դիտարկելով դրանք՝ կարելի է ասել, որ, գործառնելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, խորհրդանիշը դրանցից յուրաքանչյուրում է ձեռք է բերում իր յուրահատկությունը: Խորհրդանիշ հասկացության սահմանումների մեծ մասը հանգեցվում են դրա առարկայական բնույթին կամ համեմատվում են նշանի հետ:

Մարդու կարևորագույն առանձնահատկությունը, որով նա տարբերվում է կենդանիներից նրա և արտաքին աշխարհի միջև գոյություն ունեցող փոխներգործության առանձնահատկությունն է: Տվյալ պարագայում միջնորդների դերը պատկանում է գործիքին և խորհրդանշանին: Մարդու սոցիալական և մշակութային գործունեության պահպանումն ու տարածումը ենթադրում է բազմաթիվ կոդավորող համակարգերի առկայություն: Կոդավորումը հնարավոր է վերբալ և ոչ վերբալ մակարդակներում կամ սեմիոտիկ համակարգերի շնորհիվ, որոնք ներառում են նյութական աշխարհի առարկաներ, արվեստի, լեզվի նշանային համակարգեր: Կոդավորող համակարգերի շրջանում իր ուրույն տեղն ունի խորհրդանիշը, որի մեկնաբանումը երբեմն հնարավոր է դառնում միայն այն մշակութային փորձի համատեքստում, որում այն ձևավորվել է: Մարդկային վարքը

սիմվոլիկ է, իսկ սիմվոլիզացնելու ընդունակությունը մարդու յուրահատուկ առանձնահատկությունն է (Լ. Է. Ուայտ) և իրենից ներկայացնում է մտածողության ձև:

Մարդու ճանաչողական գործունեությունը օգտագործում է խորհրդանիշը իբրև ճանաչողության և արտացոլման հիմնական գործիք. այդ իսկ պատճառով խորհրդանիշի էության դիտարկումը անհնարին է դառնում առանց մարդկային մտածողության և մշակույթի կոգնիտիվ ասպեկտների հետազոտմանը: Ժամանակակից սոցիոկենսաբանության դրույթներից մեկում ասվում է, որ մշակույթը ձևավորվում է յուրահատուկ, միայն մարդկանց հատուկ կոգնիտիվ մեխանիզմներով: Անձն ու մշակույթը փոխկապակցված ֆենոմեններ են, որոնց փոխներգործությունը և փոխպայմանավորվածությունը տեղի է ունենում անհատական և համամարդկային խորհրդանիշների միջոցով:

Խորհրդանիշների ուսումնասիրության հարցում մեծ ներդրում ունեն հոգեբաններ Զ. Ֆրեյդը և Կ. Գ. Յունգը: Ըստ Զ. Ֆրեյդի խորհրդանիշները, դրսևորվելով երազներում, օգնում են բացահայտել անգիտակցականի և ենթագիտակցականի բովանդակությունները և հենց խորհրդանիշների ճիշտ մեկնաբանումից է կախված մարդու հոգեբանական խնդիրների արդյունավետ լուծումը: Ֆրեյդի փորձը հանգեցնել խորհրդանիշի էությունը սեռական միտումներին վերաիմաստավորվեց Կ. Գ. Յունգի աշխատություններում: Խորհրդանիշ ասելով Յունգը հասկանում էր պատկեր, բառ, որը բացի հանրաճանաչ նշանակության ունի նաև լրացուցիչ նշանակություն, որն իր հետ բերում է անորոշություն: Յունգը ևս կարծում էր, որ երազը ամենաունիվերսալ և հասանելի ոլորտն է մարդու կողմից ստեղծվող խորհրդանիշները հետազոտելու համար: Անհատական խորհրդանիշները ինքնաբուխ դրսևորվում են երազներում,

մտքերում, արարքներում, սակայն գոյություն ունեն նաև բազմաթիվ կոլեկտիվ կամ համամարդկային խորհրդանիշներ, ինչպիսիք են առասպելական, կրոնական խորհրդանիշները: Սրանք դրսևորվում են բոլոր ազգերի մոտ բոլոր ժամանակներում, բնույթով ունիվերսալ են և մշտապես պահպանում են անձի համար իրենց խորքային նշանակությունը:

Հոգեբանության մեջ հաստատված է համարվում այն միտքը, որ կրոնական, մասնավորապես քրիստոնեական խորհրդանիշները մեծ դեր ունեն անձի կայացման գործընթացում, երբեմն պայմանավորելով վերջինը: Այս թեզիսի սահմաններում կփորձենք մատնանշել Քրիստոսի որպես համաքրիստոնեական խորհրդանիշի դերը անձի կայացման գործընթացում:

Հիմնականում բոլոր կրոնական համակարգերը պարունակում են անձնային զարգացման՝ ինդիվիդուացիայի (տերմինը Կ. Գ. Ցունգինն է) գործընթացը մատնանշող խորհրդանիշներ: Ինդիվիդուացիայի գագաթնակետը ինքնության՝ անձնային ամբողջականության, հարմոնիկ գոյության ձեռքբերումն է, որը քրիստոնեության մեջ արտացոլված է Քրիստոսի խորհրդանշանային պատկերում:

Ընդհանուր առմամբ անձի կայացումը բավականին բարդ և երկարատև գործընթաց է և իրենից ներկայացնում է մարդկային գոյության ողջ ամբողջականության իրագործումը: Քրիստոսի կյանքն ու անցած ճանապարհը խորհրդանիշ է դարձել, քանի որ իրենից ներկայացնում է իմաստավորված կյանքի հոգեբանական նախատիպ, այնպիսի կյանքի, որն ուղղված է դեպի անհատականության իրագործումը: Քրիստոսը համարվում է ինքնաիրացված, կայացած անձի խորհրդանիշ: Որոշ առումով Քրիստոսի կերպարը կարելի է համարել նույնիսկ անձի կայացման իդեալ: Ըստ Ցունգի միայն կայացած անձը ինքնակամ կարող է զոհաբերել ինքն իրեն սեփական գաղափարի համար: Անձի վերջնական լիարժեք կայացումն ու ինքնիրացումը սովորաբար թվում են անհասանելի, սակայն անհասանելիությունը չի հերքում կայացման իմաստով իդեալական կերպարի առկայությունը, քանի որ իդեալը ոչ թե անձի կայացման նպատակ է, այլև ուղեցույց: Անձը չի կարող զարգանալ, եթե մարդը գիտակցաբար չընտրի սեփական կայացման ճանապարհը: Անձնային զարգացմանը պետք է նախորդի ոչ միայն կաուզալ դրդապատճառը, անհրաժեշտությունը, այլև գիտակցված բարոյական որոշումը. այնպես ինչպես դա տեղի է ունեցել Քրիստոսի պարագայում:

Այսպիսով կարելի է ասել, որ խորհրդանիշները գոյություն չունեն ինքնին հասարակական և անձնային ոլորտներից դուրս և դրանց դերը բավականին մեծ է անձի զարգացման և կայացման գործընթացում:

Христианские символы в процессе становления личности

В статье анализируется разные аспекты индивидуальных и общечеловеческих символов. На примере символического образа Христа, обсуждается значение и роль символов и в частности христианских символов, в процессе становления личности.

Գրականության ցանկ

1. Слотина Т. В. Психология личности., СПб., 2008
2. Элиаде М., Аспекты мифа., М., 1996
3. Юнг К. Г. Конфликты детской души. – М., 1995
4. Юнг К. Г.Человек и его символы. – СПб., 1996

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑՈՒ ԾՐԱԳԻՐԸ

(զեկուցման դրույթներ)

Հ.Ղ. Միրզոյան
ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ

1. Հայ առաքելական եկեղեցին դարերի ընթացքում անվերջ բարեփոխել է իր ներքին կարգ ու կանոնը, ծեսերն ու արարողությունները, եկեղեցական արդն ու զարդը, հոգևորականներ պատրաստելու եղանակներն ու մեթոդները, նրանց զգեստներն ու հանդերձանքը՝ հարմարեցնելով դրանք հասարակական կյանքի թելադրած պահանջներին:
2. Սակայն եղել են ժամանակներ, երբ պատմական անբարենպաստ պայմանների հետևանքով, ցավոք, այդ ամենը ետ են մնացել օրվա պահանջներից, խանգարել եկեղեցու լիարժեք կենսագործունեությունը, թուլացրել նրա հեղինակությունն ու ազդեցությունը հավատացյալների շրջանում: Նման դեպքերում ազգի ու նրա եկեղեցու ապագայով մտահոգ հոգևոր ու աշխարհիկ գործիչներից ոմանք սեփական եկեղեցին այդ վիճակից դուրս բերելու, այն կատարելագործված, արդիականացած ու զորացած տեսնելու նպատակով մշակել են եկեղեցու բարենորոգման յուրատեսակ ծրագրեր ու նախագծեր, որոնք այսօր ունեն ինչպես այժմեական, այնպես էլ պատմաիմացական նշանակություն:
3. Այդպիսի մի ծրագիր 1706 թ., ի պատասխան 1687 թ. Նոր Ջուղայում Աղեքսանդր Ջուղայեցու հրատարակած «Գիրք ատենական» աշխատության մեջ արծարծված խնդիրների, առաջադրել է նաև 17-18-րդ դարի ականավոր վաճառական, բանաստեղծ, երաժիշտ ու նկարիչ Ստեփանոս Դաշտեցին:

4. Քսաներկու կետից բաղկացած, պայմանականորեն ասած այդ ծրագրում Դաշտեցու շարադրած որոշ գաղափարներ, իրենց կաթոլիկամետ ոգու պատճառով, դեռ այն ժամանակ եղել են մերժելի, ուրիշները, դատելով Հայոց եկեղեցու ներկա վիճակից, վաղուց իրականացվել են, կան և այնպիսիք, որոնք չեն իրականացվել և այսօր էլ մնում են ցանկալի: Բայց անկախ այդ ամենից, իմ խորին համոզմամբ, դրանք ունեն պատմաիմացական կարևոր նշանակություն, ուստի արժե ծանոթանալ դրանց:
5. Ի հաստատումն վերը ասվածի հարկ եմ համարում նույնությամբ բերել հոգևորականների զգեստներին վերաբերող առաջարկությունները, որը, կարծում եմ, կարող է հետաքրքրել ոչ միայն սովորական ընթերցողին, այլև Հայ եկեղեցու պատմությանը քաջագիտակ մասնագետներին: 19-րդ կետում Դաշտեցին գրում է. «Թըւի թէ բարւոք էր տալ և իմն զանազանութիւն զգեստուց կարգաւորացն եկեղեցականաց: Եւ այս կամ ի ձեռն գունոց և երանգից ներկեցելոց ի յորակաց և կամ ի ձեռն ձևոց հանդերձից միայն, զի կարիցին ճանաչել նոքօք ի մէջ բազմաց միաբանից և ի մի ժողովեցելոցն. թէ ի միջի նոցա ո՞րն է կաթողիկոսն, ո՞րն աթոռակալն, ո՞րն արքեպիսկոպոսն, ո՞րն քորեպիսկոպոսն, ո՞րն պարօնտէրն, ո՞րն վարդապետն, ո՞րն աբեղայն, ո՞րն միայնակեացն, ո՞րն մոնոզոնն և այլն, զի յիւրաքանչիւրքն պատուիցին ըստ արժանաւոյ աստիճանացն իւրեանց: Կարծեմ թէ պարթևազինն մեր սուրբն Գրիգոր, մինչ էր պատրիարք ընդհանուր Հայոց, մանաւանդ թէ յօրժամ կարեցաւ գնալ ի Հռոմ, այնքան փառօք և ճոխութեամբ, ոչ է[ր] այսպիսի զգեստուք, զոր այժմ

կաթողիկոսքն մեր ունին զգեցեալ, ուրեմն և այլ: Նմանապէս և տալ հրամայել քահանայից և պատարագչացն միայն զերծել զմեջս հերաց գագաղանն, այսինքն զնշան փշեայ պսակին Քրիստոսի և ոչ հասարակ ժողովրդոց և աշխարհականացն, զի կարիցեն տարորոշիլ ի միմեանց քահանայքն և աշխարհականքն»:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

պրոֆ. Գ. Մ. Շահվերդյան

ԵՊՀ սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ

1. *Հոգեբանությունը երկար տարիներ հոգին ուսումնասիրել է մատերիալիզմի տեսանկյունից: Հոգեբանական գիտության սկզբնական շրջանում տիրում էր հետևյալ կարգախոսը՝ «Հոգեբանությունը առանց հոգու»: Սա նշանակում էր, որ հոգին հարկավոր էր ուսումնասիրել մարմնական և ֆիզիոլոգիական հակազդումների տիրույթում: Մեթոդոլոգիայի տեսանկյունից այս մոտեցումը հանգում է պատճառաբանական (causal) պայմանավորվածությանը՝ հոգեկանը մարմնական պրոցեսների գործառույթն է:*
2. *Մյուս կողմից, քրիստոնեական հոգեբանությունը, որը հիմնվում է եկեղեցու ու պաշտամունքի (cult) վրա, ուսումնասիրում է հոգեկանը հոգևոր դրսևորումների տեսանկյունից: Մեթոդաբանականորեն այստեղ մենք հանդում ենք մեկ ուրիշ պայմանավորվածության՝ ամեն ինչ բխում է Աստծո կամքից:*
3. *Հոգեբանական մի ամբողջ դպրոց ելնում է սոցիալ-հոգեբանական պայմանավորվածությունից: Այստեղ հոգեբանական և ախտահոգեբանական խնդիրները բացատրվում են շրջապատի ազդեցությամբ և շտկվում են հատուկ ադապտիվ ուսուցմամբ (learning):*
4. *Այսպիսով, հոգին հայտնվում է այս երեք պայմանավորվածությունների ծայրակցման կետում: Հարց է ծագում. արդյո՞ք կա մարդկային հոգեկանի ուսումնասիրության*

այնպիսի ոլորտ, որը գործ ունի մարդու ազատության հետ:

5. Տրամաբանորեն կլինի մտածել, որ ազատությունը հարկավոր է փնտրել հոգևորի (աստվածաբանականի), բնականի (բնագիտականի) և սոցիալականի (սոցիալական գիտություններ) հավասարակշռման կետում (гомеостаз): Սակայն սա կարելի է պատկերացնել միայն տեսականորեն:

6. Գործնականում թե՛ աստվածաբանները, թե՛ հոգեբանները գործ ունեն մարդու պատասխանատվության տարբեր աստիճանների հետ և ելնում նրանից, թե որքանով է սեփական արարքը բխում մարդու անհատական որոշումից, որը ազատ է ամեն տեսակի պայմանավորվածություններից: Ո՞ր դեպքում մենք կարող ենք վերագրել անձին պատասխանատվություն և ինչպե՞ս դրդել նրան պատասխանատվության՝ հոգեբանության հիմնահարցերից:

7. Հոգեբանական գիտության փորձը, համենայն դեպս, հստակորեն փաստում է մի բան. այդ պատասխանատվության և ներքին ազատության առաջին պայմանը լայն և լուսավոր գիտակցությունն է: Նույնը վերաբերում է հոգեվորականին. եթե պաշտամունքը տեղի է ունենում գիտակցված, այլ ոչ թե ձևականորեն, իսկ ինքը՝ հոգևորականը, հոգեբանորեն հասուն անհատականություն է, միայն այդ դեպքում արարողակարգը ստանում է ուժ: Այստեղ գործնական հոգեբանը և հոգևորականը գտնում են ընդհանուր ներքին մերձեցում:

8. Թե՛ հոգեբանը, թե՛ հոգևորականը գործ ունեն մարդու ծանր կյանքի իրավիճակի և ապրումների հետ: Գործնական հոգեբանը կամ հոգեթերապևտը տանում է մարդուն սոցիալական և բնական պայմանավորվածությունից դեպի քրիստոնեական ազատություն, իսկ հոգևորականը, համա-

պատասխանաբար, աստվածային պայմանավորվածությունից դեպի այդ ազատությունը: Այդպես նվազագույնս պետք է պատկերացնել մեր ընդհանուր նպատակը, եթե ցանկանում ենք, որ ինքնաիրականանա մարդը որպես այդպիսին:

ԿՐՈՆՆ ԱՐԴԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Աննա Ալեքսանյան
ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետ

Ժամանակակից մանկավարժական հաղորդակցման դպրոցներում առանցքային տեղ են զբաղեցնում կրոնական դաստիարակության և համամարդկային արժեքների համեմատական վերլուծության հիմնահարցերը: Հետխորհրդային կրթական համակարգի փոխակերպման գործընթացներն ու հանրային զարգացումները մանկավարժական հաղորդակցման սուբյեկտներից պահանջում են նոր լուծումներ ու արդիականացման կայուն ընթացակարգեր: Հատկապես հրատապ է դառնում ազգային մշակույթի հենքի վրա խարսխված արժեքների կայուն վերարտադրության գործընթացի իրականացումը:

Խորհրդային միաչափ և ապակրոնական դաստիարակությանը փոխարինելու եկան քրիստոնեական ժողովրդավարության բազմարժեքային և կրոնահենք մանկավարժական հաղորդակցության ընթացակարգերը: Մանկավարժական հաղորդակցման եվրոպականացման գործընթացում առանձնահատուկ կարևորություն է ստանում կրոնական դաստիարակության ներուժը: Քանզի անձի բազմարժեքային հաղորդակցման համակարգը կարող է ներանձնային «ձևավորման» մակարդակում կարգավորել և ուղղորդել նրա հետաքրքրությունների ու ներունակությունների զարգացման գործընթացները:

Ավելին, Ց. Ա. Կոմենսկին դաստիարակությունը բաժանեց երեք աստիճանի՝ առանձնացնելով համապատասխանաբար դաստիարակության երեք կարևորագույն նպատակները: Առաջին աստիճանում երեխան «ճանաչում է շրջապատող աշխարհը և ինքն իրեն», երկրորդ աստիճանում «ձևավորում է սեփական վարքը և ուրիշների գործողությունները կառավարելու կարողություններ», և երրորդ՝ ամենակարևոր աստիճանը, ըստ Ց. Ա. Կոմենսկու, հասանելի է միայն դաստիարակության առաջին երկու աստիճաններն անցած մարդուն, ում ներսում ձևավորվում է «ձգտումն առ Աստված»: Ժամանակակից տեսանկյունից վերջինս ձգտումն է կատարելության և ինքնագերազանցման: Ընդ որում՝ յուրաքանչյուր ոք ունի դաստիարակության վերջին աստիճանին հասնելու ի ծնե հնարավորություններ՝ որպես «աստվածային շնորհ»:

Հայ հասարակության զարգացման արդի պայմաններում կրոնական դաստիարակության համարժեք տեխնոլոգիաների մշակման ու կիրառման դեպքում հնարավոր կդառնա ազգային արժեքներով «միջնորդավորված անձի ինքնիրացման ու ինքնազարգացման գործընթացը»: Ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա իրականացնել մանկավարժական հաղորդակցման համակարգի համազգային նպատակներն ու կայուն զարգացումը:

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Աշոտ Ալեքսանյան
ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետ

Հետխորհրդային քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալացման արդի պայմաններում առանցքային նշանակություն ունեն կրոնական կազմակերպությունները, որոնց արդյունավետ գործառնությամբ է ապահովվում հասարակության հոգևոր հիմքերի միասնությունն ու քաղաքացիավարական կայունությունը, ինչպես նաև մարդու մշակութային իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Հետխորհրդային կայացող ժողովրդաիշանություններում ցիվիլիարխիկ կրոնական կազմակերպությունները նպաստում են հոգևոր-մշակութային սոցիալականացման նոր ընթացակարգերի կայացմանը՝ ակտիվորեն լրացնելով կրոնական աշխարհայացքի քաղաքացիավարական «պակասը»: Կայացած լինելով զարգացած ազգ-պետություններում՝ կրոնական կազմակերպություններն ազգային քաղաքացիական հասարակությունների համակարգ ներմուծեցին նոր մշակույթ, արժեքներ ու հարաբերություններ: Նույնիսկ, համեմատաբար կայացած կրոնական հաստատություններ ունեցող հետխորհրդային հասարակությունների համար, կրոնական գործոնը դարձավ ազգային արժեքների վերաիմաստավորման առանձնահատուկ եղանակ: Քաղաքացիավարական համակարգի սոցիալական փոխակերպումներն արմատապես վերափոխեցին նաև հասարակական հարաբերությունների կազմակերպման ու ինքնակազմակերպման ազգային, մշակութային, բարոյական, արժեքային և կրոնական հիմքերը: Սոցիալական փոփոխությունների բացասական երևույթներն ու արդյունքներր հանգեցրեցին միջքաղաքակրթական բախումների, արժեքային համակարգի

ճեախեղումների, կրոնական անհանդուրժողականության և ազգային ծայրահեղականության: Այս համատեքստում կրոնական սոցիալական գործընկերությունը հասարակական հարաբերությունների առանձնահատուկ տեսակ է և դրանց կարգավորման քաղաքացիավարական եղանակ, որը բնորոշ է սոցիալական պետությանն ու սոցիալական երաշխիքներ ունեցող շուկայական տնտեսության երկրներին: Կրոնական, սոցիալական գործընկերության ու սոցիալական պատասխանատվության ընթացակարգերով են պայմանավորված հասարակության հոգևոր-մշակութային ենթահամակարգի կայացման քաղաքացիավարական նախադրյալները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալացման երաշխիքները, որովհետև այն ենթադրում է միջկրոնական, միջինստիտուցիոնալ, միջպետական, միջանձնային և միջխմբային մակարդակներում համագործակցություն ու արդյունավետ մշակութային քաղաքականության իրականացում:

ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

(Թեզիսներ)

Ա. Ե. Մկրտիչյան
Սոցիոլոգիայի ֆակուլտետ

Յուրաքանչյուր կենսունակ ազգ, ելնելով սեփական աշխարհընմբռնումից, սահմանում է իր արժեքների համակարգը, նպատակներն ու ցանկությունները, որոնց տեսաբանված ամբողջությունը հանդիսանում է տվյալ ազգի գաղափարախոսությունը: Հետևաբար ցանկացած գաղափարախոսության կառուցվածքի հիմքը կազմում է որոշակի արժեքային համակարգ և հենց արժեքային կողմնորոշումների հիման վրա էլ ստեղծվում են նորմերը, պատկերացումները և գաղափարները: Ուստի կարելի է պնդել, որ գաղափարախոսության ֆենոմենի կենտրոնում արժեք հասակացությունն է, որ յուրաքանչյուր գաղափարախոսություն արժեքների և համապատասխան արժեքային կողմնորոշումների և դատողությունների վրա կառուցված համակարգ է:

Արժեքը մարդու, խմբի կամ ամբողջ հասարակության համար շրջապատող աշխարհի օբյեկտների նշանակալիությունն է: Դա հենց օբյեկտների հատկությունը չէ, այլ նրանց ներառվածության արդյունքն է մարդու հետաքրքրությունների և պահանջմունքների, մարդկանց կենսագործունեության ոլորտում: Շնորհիվ արժեքների առանձին մարդու կյանքը իմաստ է ստանում: Արժեքն այն է, ինչն ընկած է մարդկային որևէ պահանջմունքի բավարարման հիմքում և որի ձեռքբերմանն են ձգտում նաև սոցիալական կամ էթնիկ խմբերը, ազգերը:

Պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունը ձևավորում է շահը, իսկ կենսական շահերն անպայմանորեն արտահայտվում են գաղափարախոսության մեջ: Արժեքների և արժեքային կողմնորոշումների հետ սերտորեն կապված են ազգային պահանջմունքները, ինչպես նաև ազգային նպատակները: Դա այդպես է նաև անձնական մակարդակում. յուրաքանչյուր մարդու նպատակներն ու պահանջմունքները որոշվում ու ծագում են՝ ելնելով նրա արժեքների և արժեքային կողմնորոշումների համակարգից: Անձի ձևավորման գերակշիռ գործոնը ազգային համակարգված միջավայրն է: Ժառանգականության և այդ համակարգի արդյունք անձի հոգեկերպի ռացիոնալ և իռացիոնալ համա՞սանության չափը արտացոլում է ազգային կենսակերպի, մտածողության, պատմության ու մշակույթի, մի խոսքով՝ ազգային քաղաքակրթության պարունակած ռացիոնալ-իռացիոնալ համամասնության չափը: Հենց դա էլ ընդհանրացված ձևով մենք կանվանենք ազգային հոգեմտակերպ՝ ենթադրելով, որ այն ներառում է նաև հայերեն իր համարժեքը չունեցող, բայց բավականին տարածված «մենթալիտետ» եզրը:

Կարևոր անձնական և խմբային արժեքներ են հանդիսանում ազատությունը, հավասարությունը և արդարությունը, ընտանիքը՝ որպես արժեք, պետականությունը: Այս շարքում իրենց արժանի տեղն ունեն նաև հավատը և ազգային-կրոնական այլ արժեքներ, որոնք պայմանավորում են ազգային մենթալիտետը:

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Ս. Ա. Մանուկյան
ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետ

Հետխորհրդային 20 տարիների ընթացքում վերականգնվել է խղճի ազատությունը՝ մարդիկ հնարավորություն ունեն ազատորեն արտահայտելու իրենց կրոնական պատկանելությունը, մասնակցելու կրոնական արարողություններին և ծեսերին: Ազատ գործելու հնարավորություն են ստացել ոչ միայն տվյալ հասարակության ավանդական կրոնական կազմակերպությունները, այլ նաև այլ կրոնական ուղղությունները: Այդպիսով հնարավոր է դարձել ուսումնասիրել կրոնական գիտակցության փոխհարաբերությունները սոցիալական վարքի տարբեր բաղադրիչների հետ:

Զեկույցում փորձ է կատարված բացահայտել, թե արդյո՞ք անձի կրոնական գիտակցությունը, դիրքորոշումներն ու վարքը շաղկապված են նրա այլ դիրքորոշումների հետ և, եթե այո, ապա որքանով են ուժեղ և ինչ բնույթ ունեն այդ կապերը:

Այդ նպատակով օգտագործվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների «Տվյալների հավաքագրման նախաձեռնություն» ծրագրով 2007 թ. իրականացված հանրապետական մակարդակով ներկայացուցչական սոցիոլոգիական զանգվածային հետազոտության տվյալների շտեմարանը: Շտեմարանում առկա են անձի կրոնական պատկանելությունը, գիտակցությունն ու վարքը նկարագրող 5 փոփոխականներ, դրանք են. 1. «Ո՞ր կրոնական դավանանքի հետևորդ եք Ձեզ համարում», 2. «Որքանո՞վ է կարևոր Ձեր համար կրոնական հավատքը ամենօրյա որոշումներ կայացնելու հարցում», 3. «Բացի հատուկ իրադարձություններից, ինչպիսիք են հարսանիքը, թաղումը, որքա՞ն հաճախ եք մասնակցում կրոնական արարողություններին», 4. «Որքա՞ն հաճախ եք Ձեր կրոնական ավանդույթներին համապատասխան պաս պահում», 5. «Բացի կրոնական արարողությունների մասնակցելուց, երբևէ աղոթու՞մ եք, եթե այո, ապա որքա՞ն հաճախ»:

Հայաստանի հասարակությունում կրոնական գիտակցության և վարքի բնութագրերի մեկնաբանության նպատակով համեմատվել են այդ փոփոխականների բաշխումները Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, ինչպես նաև Վրաստանի երեք էթնոմշակութային փոքրամասնությունների՝ վրացահայերի, վրաց-ադրբեջանցիների և իսլամ դավանող վրացիների շրջանում:

Վերոնշյալ 2-4 հարցերի միջոցով կառուցվել է բաղադրյալ փոփոխական՝ «կրոնական վարքի ինդեքս» և իրականացվել է դրա և անձի հասարակական այլ դիրքորոշումները ներկայացնող փոփոխականների կորելյացիոն վերլուծություն:

Կրոնական վարքի ինդեքսի ամենամեծ արժեքը վրաց ուղղափառների և վրացի մահմեդականների շրջանում է, որոնց հաջորդում են Հայաստանի հայ առաքելականները, իսկ հետո՝ Ադրբեջանի մահմեդականները:

Հայաստանում կրոնական վարքի ինդեքսի առավել բարձր արժեքներ ունեցող շերտում մի փոքր գերակշռում են կանայք: Այս շերտը, նախ և առաջ, բնութագրվում է եկեղեցու նկատմամբ ավելի բարձր վստահությամբ, իրենց երեխաների մոտ կրոնական հավատի, իսկ աղջիկ երեխաների մոտ նաև՝ հնազանդության դաստիարակության արժևորմամբ: Կենցաղային և սեռական վարքում այս շերտին պատկանող անձինք ավելի ավելի ավանդապաշտ են, նրանք ավելի քիչ են ծխախոտ օգտագործում և չարաշահում ոգելից խմիչքները:

Ինդեքսի արժեքների աճը բավական թույլ, սակայն վիճակագրորեն նշանակալի շաղկապված է անձի մի շարք բնութագրերի, մասնավորապես քաղաքացիական հասարակությանը բնորոշ հատկանիշների հետ: Օրինակ՝ կրոնական վարքի ինդեքսի համեմատաբար ավելի բարձր արժեքներով շերտում, միջին հաշվով, ավելի բարձր է քաղաքացիական մշակույթի զարգացման աստիճանը, այդ թվում՝ քաղաքացիական մասնակցությունը: Բացի այդ, նրանք ավելի հաճախ են գումար նվիրաբերում բարեգործական նպատակներով և աշխատում որպես կամավոր, ավելի են հակված համարելու, որ «մարդիկ արդար են վարվում իրենց հետ», իսկ հասարակությունը համարում են ավելի այլասիրական: Այս շերտում ավելի զարգացած է սոցիալական կապիտալը: Շերտին պատկանող անձինք ավելի բարձր վստահություն ունեն քաղաքացիական հասարակության ինստիտուտների նկատմամբ, ավելի անհանդուրժող են կաշառակերության նկատմամբ և ավելի են հակված համարելու, որ կարողանում են վերահսկել իրենց կյանքի ընթացքը: Բացի այդ, նրանք ավելի շատ են գիրք, ամսագիր և լրագիր կարդում, միջին հաշվով, ավելի լավ են տիրապետում անգլերենին և ավելի խստապահանջ են դպրոցական գիտելիքների նկատմամբ:

Այս անձինք ավելի են հակված, որ Հայաստանում բոլոր քաղաքացիների համար պետական լեզուն պետք է լինի հայերենը, ավելի հեռու են ընկալում իրենց այլ ազգերի սոցիալական տարածությունը և ավելի քիչ են հակված, որպեսզի Հայաստանը զարգացնի իր հարաբերությունները Իրանի և Վրաստանի հետ:

Հարավկովկասյան երկրների ազգային և կրոնական կազմը

Աղյուսակ 1. Հարավկովկասյան երկրների ազգային կազմը, ՀՌԿԿ 2007 թ.

Ազգություն	Հայաս.	Ադրբ.	Վրաս.
Հայ	98.6%		7.7%
Վրացի	.0%	.0%	84.0%
Ադրբեջանցի		98.1%	3.3%
Ռուս	.6%	1.0%	1.9%
Այլ կովկասյան ազգություն	.3%	.4%	.9%
Այլ ազգություն	.4%	.4%	2.2%
Total	100.0%	100.0%	100.0%

Աղյուսակ 2. Հարավկովկասյան երկրների կրոնական կազմը, ՀՌԿԿ 2007 թ.

Կրոնական պատկանելություն	Հայաս.	Ադրբ.	Վրաս.
Հայ առաքելական եկեղեցի	94.5%	.1%	6.2%
Կաթոլիկ	.1%	.1%	.1%
Ուղղափառ	.5%	1.1%	85.2%
Բապտիստ	.0%	.2%	.1%
Այլ բողոքական եկեղեցի	.2%	.1%	.2%
Այլ քրիստոնեական եկեղեցի	.7%	.1%	.3%
Իսլամ	.0%	97.8%	6.1%
Այլ	1.1%	.1%	.4%
Ոչ մի	2.9%	.4%	1.5%
Հուդայական		.0%	.0%
Total	100.0%	100.0%	100.0%

Կրոնական գիտակցության և վարքի բաղադրիչները

Աղյուսակ 3. Որքանո՞վ կարևոր դեր է կատարում Ձեր կրոնական հավատքը կայացնելու համար ամենօրյա որոշումներ:

	ՀԱ	ՎՈՒ	ԱԻ	ՎՀ	ՎԱ	ՎՄ
1 Բոլորովին կարևոր չէ	13.5%	1.6%	10.8%	1.3%	5.8%	1.1%

2	12.7%	5.2%	14.2%	8.1%	10.7%	4.3%
3	25.2%	16.5%	25.9%	19.5%	26.2%	23.4%
4	20.2%	24.2%	25.6%	41.9%	28.2%	30.9%
5 Շատ կարևոր է	28.4%	52.6%	23.5%	29.2%	29.1%	40.4%



Աղյուսակ 4. Բացի հատուկ իրադարձություններից, ինչպիսիք են հարսանիքը, թաղումը, որքա՞ն հաճախ եք մասնակցում կրոնական արարողություններին: %

	ՀԱ	ՎՈՒ	ԱԻ	ՎՀ	ՎԱ	ՎՄ
1 Երբեք	20.5%	12.4%	27.3%	19.4%	46.5%	36.2%
2 Ավելի հազվադեպ	29.1%	21.8%	28.9%	28.6%	8.1%	11.7%
3 Միայն հատուկ տոներին	25.5%	26.0%	24.9%	33.1%	37.4%	23.4%
4 Առնվազն ամիսը մեկ	14.2%	19.0%	11.0%	12.1%	5.1%	3.2%
5 Շաբաթը մեկ անգամ	6.6%	12.9%	2.8%	5.2%	1.0%	14.9%
6 Ավելի քան շաբաթը մեկ անգամ	2.8%	6.5%	1.8%	1.2%	1.0%	6.4%
7 Ամեն օր	1.3%	1.3%	3.3%	0.4%	1.0%	4.3%



Աղյուսակ 5. Որքա՞ն հաճախ եք Ձեր կրոնական ավանդույթներին համապատասխան պաս պահում:

	ՀԱ	ՎՈՒ	ԱԻ	ՎՀ	ՎԱ	ՎՄ
1 Երբեք	79.1%	57.6%	33.2%	71.8%	28.4%	38.3%
2 Հազվադեպ	9.9%	18.9%	17.9%	19.6%	48.9%	11.7%
3 Երբեմն	6.7%	11.5%	26.3%	5.7%	12.5%	3.2%
4 Հաճախ	2.8%	6.5%	8.7%	2.0%	3.4%	7.4%
5 Միշտ	1.5%	5.2%	13.8%	0.4%	4.5%	39.4%
6 Պաս չի պահանջվում իր կրոնում	0.0%	0.3%	0.0%	0.4%	2.3%	



Աղյուսակ 6. Բացի կրոնական արարողությունների մասնակցելուց, երբևէ աղոթու՞մ եք, եթե այո, ապա որքա՞ն հաճախ

	ՀԱ	ՎՈՒ	ԱԻ	ՎՀ	ՎԱ	ՎՄ
1 Երբեք	22.5%	9.1%	25.4%	19.4%	14.6%	40.9%
2 Ավելի հազվադեպ	20.6%	17.2%	30.5%	23.4%	7.8%	15.1%
3 Միայն հատուկ տոներին	6.0%	11.2%	21.7%	20.6%	33.0%	2.2%
4 Առնվազն ամիսը մեկ	5.9%	7.9%	4.9%	6.9%	2.9%	1.1%
5 Շաբաթը մեկ անգամ	6.8%	9.5%	1.7%	5.6%	2.9%	5.4%
6 Ավելի քան շաբաթը մեկ անգամ	10.0%	15.8%	1.8%	10.5%	7.8%	16.1%
7 Ամեն օր	28.2%	29.5%	14.1%	13.7%	31.1%	19.4%



Կրոնական վարքի ինդեքս

Աղյուսակ 7.

Ինդեքս	ՀԱ	ՎՈՒ	ԱԻ	ՎՀ	ՎԱ	ՎԻ
0-4	30.8	12.9	29.0	21.6	17.5	32.3
5-10	41.3	40.2	49.9	57.3	60.0	21.5
11-15	24.4	36.2	13.6	19.4	20.0	22.6
16-20	3.5	10.7	7.5	1.7	2.5	23.7



Աղյուսակ 8. Կրոնական վարքի ինդեքսի միջին արժեքները հարավկովկասյան էթնոմշակութային խմբերում:

1 Հայ առ.	11.27
2 Վր. ուղ.	13.69
3 Ադ. մահմ.	11.22
4 Վր. հայ	11.17
5 Վր. աղր.	11.50
6 Վր. մահմ.	13.27
Total	12.14



ԱՎԱՆԴԱԿԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԵՍԵՐԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳՈՒՄ

Լիլիա Վարդանյան
ՀԱԻ

Հայոց իրողության մեջ, մասնավորապես ընտանեկան ծիսակարգում Հայ Առաքելական եկեղեցին միշտ ունեցել է իր ուրույն տեղն ու նշանակությունը: Մարդու կյանքի հիմնական փուլերը կապված էին եկեղեցու հետ՝ լիներ դա ամուսնություն, մկրտություն թե թաղման արարողություն:

Ավանդական կենցաղում ամուսնությունը պարտադիր օրհնվում էր եկեղեցու կողմից, ուստի օրենսդիր ուժ ունեցող եկեղեցական պսակադրությունը ամուսնահարսանեկան ծիսակարգի անբաժան մասն էր կազմում: Այն տեղի էր ունենում հարսանիքի օրը՝ հարսնառից հետո մինչև հարսին փեսայի տուն բերելը: Առանց եկեղեցու խորհրդի և օրհնության ամուսնությունը անվավեր էր ճանաչվում:

Ոչ պակաս նշանակություն ուներ մկրտության (կնունքի) խորհուրդը, որը հաստատում էր նորածին երեխայի հայ քրիստոնյա դառնալու փաստը: Մկրտված-չմկրտված լինելու հետ էր կապված հայերի մեջ գոյություն ունեցող մանուկ-երեխա հասկացողության տարբերակումը: Հատկանշական է, որ ըստ ժողովրդական պատկերացումների, չմկրտվածը (անկնունքը) հարամ էր համարվում և մահանալու դեպքում նրան գերեզմանից դուրս՝ մի որևէ մեկուսի տեղում էին թաղում:

Թաղման ավանդական ծեսերը սկզբից մինչև վերջ կատարվում էին ըստ ընդունված եկեղեցական արարողակարգի՝ սերտորեն միաձուլված լինելով ժողովրդական պատկերացումների և հավատալիքների հետ:

Խորհրդային շրջանում պետության կողմից իրականացվող հակակրոնական քաղաքականության հետևանքով ընտանեկան ծիսակարգի կրոնա-ավանդական գործոնը անկում ապրեց: Նրա վերելքը տեղի ունեցավ հետխորհրդային շրջանում՝ Ղարաբաղյան շարժման հետ կապված համազգային զարթոնքի և Հայաստանի անկախացման տարիներին, երբ հռչակվեց ազգային-կրոնական արժեքների գերակայություն:

Մեր օրերում չնայած հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխություններին, շուկայական նոր հարաբերություններին, հայ ավանդան սոցիոնորմատիվ համակարգը, ընդհանուր առմամբ, պահպանել է իր ազգային նկարագիրը: Բավականին լայն տարածում է ստացել ընտանեկան ծեսերը եկեղեցական արարողակարգով կատարելու միտումը, ինչի մասին են վկայում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 2007-2010 թթ. էթնոսոցիոլոգիայի բաժնի հետազոտությունների արդյունքները: Այսպես, 2009 թ. Կապան քաղաքում ամուսնացողների յուրաքանչյուր երրորդ զույգը պսակադրվել է տեղի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

Այս խնդրում մեծ է Հայ Առաքելական եկեղեցու դերը ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում, քանի որ այլէթնիկ միջավայրում ապրող հայերի համար պսակադրության, մկրտության, թաղման արարողակարգի և ավանդական այլ ծեսերի կատարումը, ինչպես նաև մայրենի լեզվին տիրապետելը, հայ ինքնության պահպանման կարևոր դրսևորումներից է:

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԴԻ ԻԴԵԱԼԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ. ԿՐՈՆԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հարություն Վերմիշյան
Սոցիոլոգիայի ֆակուլտետի ասիստենտ

- *Սոցիոլոգիայի, մասնավորապես կրոնի սոցիոլոգիայի, ուսումնասիրության խնդրակարգում կենտրոնական տեղ է գրավում կրոնի ինստիտուտի փոխակերպման, հասարակության ապակրոնականացման և աշխարհիկացման գործընթացների վերլուծությունը: Սոցիոլոգիայի ձևավորման շրջանից (19-րդ դարի երկրորդ կես) մինչ մեր օրերը շատ նշանավոր սոցիոլոգներ (Մ. Վեբեր, Է. Դյուրկհեյմ, Տ. Լուկման, Պ. Բերգեր և ուրիշներ) վերլուծության են ենթարկել աշխարհիկի և կրոնականի փոխհարաբերակցության առանձնահատկությունները՝ անդրադարձ կատարելով կրոնական հավատալիքների և ինստիտուտների փոխակերպումների, դրանց արդի դրսևորումների հիմնահարցերին:*
- *Հասարակական գիտակցության մեջ կրոնականի և աշխարհիկի փոխհարաբերակցման, հիմնահարցը այսօր ևս կենտրոնական է թե՛ կրոնի սոցիոլոգիայում, թե՛ ֆունդամենտալ սոցիոլոգիայում և թե՛ կրոնագիտական հետազոտություններում: Որպես կրոնականի և աշխարհիկի փոխհարաբերակցության չափման սոցիոլոգիական ցուցիչ (ինդիկատոր) կարելի է դիտարկել եկեղեցու հանդեպ հասարակական ընկալումները, ուր եկեղեցին հանդես է գալիս, որպես...*

1. *... սոցիալական նշանակալի գործառույթներ իրականացնող սոցիալական ինստիտուտ,*
2. *... անհատի ինքնությունը (խմբային պատկանելիությունը) պայմանավորող սիմվոլիկ համակարգ,*
3. *... անհատի վարքը պայմանավորող նորմատիվ կառույց:*

Վերոհիշյալ երեք՝ մակրո, մեզո և միկրո մակարդակներում եկեղեցու հանդեպ հասարակական ընկալումների բացահայտումը (ինչը դրված է սույն հոդվածի հիմքում) թույլ կտա խոսել արդի հայ հասարակության կրոնական պատկերացումների, կրոնականի և աշխարհիկի փոխհարաբերակցության առանձնահատկությունների և նրանում ընթացող ապակրոնականացման և աշխարհիկացման գործընթացների արդի դրսևորումների սոցիոլոգիական, ինչու չէ՝ նաև կրոնագիտական, նշանակալի ասպեկտների մասին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էդիկ Մինասյան - Հայ և Ռուս եկեղեցական արդի հարաբերությունների պատմությունից 3
Մխիթար Գաբրիելյան - Կրոնն ու կրոնականը հյուսիսկովկասյան տարածաշրջանում 9
Ռուզաննա Ծատուրյան - Հայոց ավանդական տոներ. ժամանակակից կրոնական և ժողովրդական դրսևորումները 14
Պարգև Բարսեղյան - Հնագույն հավատալիքների ժամանակակից վերապրուկները 18
Ժորա Պապոյան - Ներփակ գիտելիքների ավանդական ձևերը 21
Ավետիս Քալաշյան - Կրոնը համաշխարհայնացման արդի մարտահրավերների համատեքստում 22
Գոհար Սարգսյան - Ազգակրոնական ինքնության դեմ ուղղված արդի մարտահրավերները 27
Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան - Խաչ-թրի խորհրդանշական իմաստի որոշ կողմեր 31
Սամվել Մկրտչյան - Հայոց կրոնական վարքագծի տարիքային առանձնահատկությունները խորհրդային և ետխորհրդային համակարգերի համատեքստում 34
Էլինա Ասրիյան - Քրիստոնեական խորհրդանիշները անձի կայացման գործընթացում 38
Հ. Միրզոյան - Հայ եկեղոցու բարենորոգման Ստեփանոս Դաշտեցու ծրագիրը 42
Գ. Մ. Շահվերդյան - Հոգեբանության և աստվածաբանության մերձեցման հարցի շուրջ 45
Աննա Ալեքսանյան - Կրոնն արդի մանկավարժական հաղորդակցման համակարգում 48
Աշոտ Ալեքսանյան - Կրոնական կազմակերպությունները ետխորհրդային քաղաքացիական հասարակության համակարգում
Ա. Մկրտիչյան - Ազգային-կրոնական և անձնական արժեքների համադրման հիմնախնդիրը 50
Ա. Մանուկյան - Կրոնական գիտակցություն և քաղաքացիականմ շակույթ 52
Լիլյա Վարդանյան - Ավանդական ընտանեկան ծեսերը Հայ Առաքելական եկեղեցու արարողակարգում 63
Հարություն Վերմիշյան - Եկեղեցու արդի իդեալը հայ հասարակական պատկերացումներում. 65